

**ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԻ  
ԳՈՒՅՆԸ**

**ԵՐԵՎԱՆ  
«ՆԱԻՐԻ»**

**2009**

ՀՏԴ 891.981-3 Սարգսյան  
ԳՄԴ 84 Դ-4  
Ս 259

*Շապիկի ձևավորումը  
Նարեկ Մարկարյանի*

**Սերգեյ Սարգսյան**  
Ս 259 Վարդագույն քաղաքի գույնը.— Եր.: Նաիրի, 2009,  
156 էջ:

ԳՄԴ 84 Դ-4

ISBN 978-5-550-01559-9

© Սերգեյ Սարգսյան, 2009



## Գլուխ 1

*Տիլիլի-լի-լի-լի-լի  
Տիլիլի-լի-լի-լի-լի  
Արմենոհոս*

Վիլոն երբեք սնահավատ չէր եղել. չուներ սիրված թիվ, սիրված գույն, սիրված համաստեղություն կամ ուրիշ՝ իր կարծիքով ղզիկ նախասիրություն, որի վրա ինչ-որ ժամանակ ծախսեր: Չնայած դրան բանկային աշխատանքը իր մեջ ինչ-որ ենթագիտակցական բնազդ էր մտցրել, որը ստիպում էր նրան ժամը հինգից հետո հինգ րոպե մեկ նայել ժամացույցին՝ սպասելով ազատագրական պահի՝ աշխատանքային օրվա ավարտին: «Սպիտակների» լեզվով՝ «close of business»-ին:

Բայց հենց այս հինգշաբթի նա ավելի քիչ էր նայում ժամացույցին ու ավելի շատ էր գնում քսերոքսի սենյակ, ինչ-որ հաշվեհամարների պատճեններ անելու: Վիլենը անկեղծ էր ինքն իր հետ և հասկանում էր, որ իրեն ձգում ա այնտեղ ոչ այնքան էտ *ապառառը*, ոչ էլ էն նորեկ սիրունիկ հաշվապահի օգնականը, որը միշտ էտ սենյակում էր, այլ այդ օգնականի վերնաշապիկը, որի արձակած վերևի կոճակը Վիլոյի համար ենթադրում էր որոշակի կոչ:

– Էլի քսերոքս?– հարցրեց Ալիսան, որը համարյա ամբողջ օրը պատճենով էր զբաղված:

– Հա... Ճիշտն ասած ուզում եմ մինչև տուն գնալը մի քանի կարևոր բան վերջացնեմ,– կիսաժպտալով, կիսափորձելով նայել Ալիսայի աչքերի մեջ, ասեց Վիլոն:

– Ուզում եք ես անեմ բերեմ ձեր սենյակ?

– Չէ, նորմալ ա: Իմիջայլոց արդեն երրորդ պատճենն ա... կարանք երևի «դու»-ի անցնենք,– ֆլիրտանման ժպիտով իր ստանդարտ կատակներից փորձեց Վիլոն:

– Կարելի ա,– ասեց աղջիկը, առանց ֆլիրտը ինչ-որ ձևով վերադարձնելու:

– Օքեյ, իմիջայլոց, իմ անունը Վիլեն ա:

– Ուրախ եմ, Ալիսա,– սառնոտ էր: Ահագին սառնոտ... չնայած դա գուցե արդարացված էր այդ հանգամանքների համար. ոչ մեկ չգիտեր ջերմ արձագանքը քսերոքսի սենյակում ինչի կարող ա բերել գեղեցիկ աղջկան մեծ բանկում:

Սառնոտ էր, բայց սիրուն: Սև մազերով ու սպիտակ հարթ և հավանաբար փափուկ մաշկով Ալիսան ներառում էր այն ամենը, ինչ ստիպում էր տղամարդկանց մտածել արտաաշխատանքային զբաղմունքների մասին: Ալիսան չէր նայում աշխատողների աչքերի մեջ, բայց ստիպում էր, որ բոլորը փնտրեն իր հայացքը: Ալիսայի բոլոր շրջագգեստները առանձնանում էին ծածանվող, հմայիչ ճեղքերով, որոնք հաշվապահական բաժնում անընդհատ ստեղծում էին երկրորդական հարցերով մտնող աշխատողների հերթեր... Բացի լավիկը լինելուց համ էլ լավ զգեստերի ճաշակ ուներ:

Վերադառնալիս Վիլոն հանդիպեց միջանցքով անցնող Արսենին: Արսենը աշխատում էր ներքևի հարկում, լսում էր Թաթուլ, Սպիտակցի Հայկո ու ռեպեր, որտեղ շատ էին քֆուրները, բջջայինի մեջ պահում էր պոռնոներ ու ժուլիի նկարը: Արսենը միշտ ինչ-որ հարց էր տալիս հանդիպող աշխատողներին, որով ցույց էր տալի, որ ինքը ինչ-որ ակտուալ բան գիտի կամ մտածում ա կամ կերել ա:

– Վիլ, նոր *այֆոնների* ֆունկցիաներից խաբար ես? Վրեն իչքան հիշողություն կլնի?

– Չգիտեմ...

– Մոտավորապես: Վերցնեն, թե չէ? - շարունակում էր իր նոր գնման մասին լսասցնել անցնող գործընկերներին Արսենը:

– Վերցրու, – Արսենը քիչ մարդկանց էր դուր գալի: Ցավոք այդ քիչ մարդիկ էին որոշում կադրային հարցերը:– Մի երկու անգամ շատ կտեղավորես մեջը քո... կարևոր կլիպերից:

Արսենը չէր լսում պատասխանները որպես կանոն: Նրա հարցի ֆունկցիան ուղղակի նշմարվելն էր ինչ-որ ակտուալ հարցով:

Հեռվից դանդաղ վազքով (գուցե արագ քայլով) մոտեցավ բաժնի գործավար Հասմիկը: Հաճելի արտաքինով, բայց բացարձակապես անասող այս օրիորդը աչք ուներ Վիլոյի վրա: Լուրջ աչք: Վիլոն կարող ա և զգում էր, որ տենց բան կա, բայց փորձում էր չկենտրոնանալ դրա վրա:

– Վիլեն,– միշտ լրիվ անունով էր դիմում Վիլոյին,– հազար դրամ ենք հավաքում: Մյուս շաբաթ Արսենի ծնունդն ա, նվեր պետք ա առնենք:

– Ա... հեսա,– Վիլոն կատաղում էր սենց հեզմանքից՝ շնորհավորել մարդկանց, ում չես սիրում միայն նրա համար, որ... ու ստեղ ինքը կախվում էր, որովհետև չգիտեր ինչու:– Ես կբերեմ լավ? Հիմա մեծ ա մոտս:

– Օքեյ, իսկ ուզում ես միասին գնանք նվեր առնելու? Տղամարդ ես, կարողա ավելի լավ իմանաս, ինչ կուզենա Արսենը...

– Չէ Հաս ջան, ես... իմ մոտ կրիտիկական օրեր են: Եթե գամ, պտի անընդհատ նվնվամ:– իրա տիպիկ կատակներով տակից փորձեց դուրս գա:

– Հահ,– ծիծաղալով հեռացավ Հասմիկը: Հասմիկը գիտեր, որ Վիլոն ուներ սուր հումորի զգացում` լսել էր մյուսներից, ու չնայած հիմնականում կատակները չէր հասկանում, բայց պարտաճանաչ ծիծաղում էր:

Սեղանին մոտենալով Վիլոն տեսավ իր թողած *ստիկեռը*, որտեղ գրած էր ինչ-որ ինքն իրեն հիշացնելու գրություն: «Առնուղ Մնացականյան: Վարկ` մերժել: Պատճառ` եկամտի սակավություն»:

Վիլոյին, ինչպես և բոլոր հոգեպես առողջ մարդկանց դուր չէր գալիս նման զանգեր կատարելը և նա միշտ խուսափում էր դրանից: Դա անելը դժվար չէր, որովհետև իր բաժնուն շատերն էին սիրում դա անել: Վիլոն ուներ քիչ մտերիմներ Հայ-Բրիտանական ներդրումային բանկում...

Նա գիտեր, որ այս անգամ ինքը պետք ա անի այդ զանգը և հավաքեց համարը: Համարը բջջային էր:

– Ալո, բարև ձեզ, Առնուղ Մնացականյան?

– Հա, Անուշ?

– Ոչ... (տհաճ նորությունը, որ Վիլոն պետք ա հայտներ, սկսեց ոչ այդքան տհաճ թվալ): Ձեզ անհանգստացնում են ՀԲՆ բանկից: Դուք դիմել էիք երկու միլիոն դրամի սպառողական վարկ ստանալու համար: Ես վարկային բաժնից եմ զանգահարում: Եթե...

– Հա ախպերս: Ասա, երբ գանք վերցնենք: Ահագին հետ ընգավ սաղ դրա պատճառով, արդեն ուզում էինք էյչ-ես-բի-սի գնայինք...

– Գիտեք, մենք ցավոք չենք կարող ձեզ տրամադրել այդ վարկը: Ձեր եկամտային փաստաթղթերի համաձայն դուք չունեք համապատասխան ամսական եկամուտ, որպեսզի...

– Ախպերս, ես էտ տղուն ասել եմ, ով որ նստած էր էտեղ, որ պրոբլեմ չունեք դուք. ես շինարարական օֆիս ունեմ ու եկամուտը... կա էլի, թղթերով չէ բայց, նենց մի քանի ան-

գամ բարձր ա: Իսկապես որևէ պրոբլեմ չունես, ցավդ տանեն: Հարկային ա բան ա, սաղ թղթերով հո չեն ցույց տալի իչքան ա ստացվում *օհշի* թիվը, բայց իսկապես լռիվ հերիքում ա հարուր տոկոս:

– Ես հասկանում եմ, բայց մեր ներքին կանոնադրությունը թույլ չի տալիս ձեր ներկայացված փաստաթղթերի հիման վրա տրամադրել վարկ: Կներեք:

– Վաղը աշխատում եք? Ես կուզենայի գայի մի հատ զրույց ունենայինք միասին:

– Խնդիր չկա: Համեցեք ժամը տասից, հաջողություն:–  
հեռախոսը կախելուց հետո, Վիլոն արագ, ջղայնացած վեր կացավ: Ժամը վեցին հինգ էր պակաս: *Կոմպը* անջատեց ու արագ շարժվեց դուրս: Լիֆտի մոտ Ալիսան էր: Բացի նրանից, որ ավելի վաղ Ալիսան չխոսկան էր երևում, նա վերնաշապիկի ևս մեկ կոճակ էր արդեն կոճկել, ինչը Վիլոյի մոտ ստեղծեց ինքնապաշտպանության կազմակերպման տպավորություն ու համապատասխան եզրակացություններ:

– Առաջին հարկ? – միամտորեն հարցրեց Ալիսան:

– Բոլոր ճանապարհները տանում են առաջին հարկ,– ավտոմատ սրամտեց Վիլոն: Բնականաբար Ալիսան չարձագանքեց ժպիտով և նրանք իջան: Լիֆտի մեջ Վիլոն սովորաբար բավական անկաշկանդ էր զգում. նայում էր հայելու մեջ, մազերը դզում, բայց ոչ այս անգամ:

Դռները բացվեցին: Ալիսան արագ դուրս եկավ, գնաց դեպի դուռը, իսկ Վիլոն մի քիչ դանդաղեցրեց, որ չստիպի աղջկան նորից խուսափել իրենից:

Վիլոն մոտեցավ դռանը: Ներքևի տղեքին հաջող ասեց ու կանգնեց դռան պատուհանի առաջ: Չնայած Ալիսայից հույսեր չունեի, բայց չէր կարողանում հայացքով չճանապարհել Ալիսայի պերճախոս շրջագգեստը: Անտարբերությունը

ու սառնությունը մի կողմ, բայց հաճելի դիմագծերը մեջքի կողմից չգնահատելը ճիշտ չէր համարում:

Մի քանի թոպեից ինքն էլ դուրս եկավ: Անձրևոտ էր, բայց լավ խմելու պլաններ կար: Դրա համար արագ շտապեց Վայլդ Վեստ՝ ընկերների հետ պայմանավորված տեղը:

Վիլենը քսանութ տարեկան էր: Վերջերս՝ արդեն մի քանի տարի, ինչ-որ *դիսկոմֆորտներ* էր զգում: Ինչ-որ բան ուզում էր փոխի, ինչ-որ բան դուր չէր գալի մարդկանց մեջ, ինչ-որ ձևով ուզում էր խեղդի անընդհատ հանդիպող հոգևոր մուտանտներին՝ ինչպիսին Արսենն էր:

## Գլուխ 2

*Քո ծնունդն է այսօր, քո ծնունդն է այսօր,  
Թող գան ընկերներդ, ծանոթներդ բոլոր,  
Թող երգեն «happy birthday» կամ շնորհավոր:*

**Ա. Գ.**

Վեստը կարգին բար ա: Միշտ կա կարգին գարեջուր ու երաժշտություն: Մատուցողուհիները հիմնականում չեն կոպտում, նույնիսկ ժպտում են: Գների ու ժպտերեսության գրավող համաչափություն:

Վերջի անկյունի սեղանի մոտ նստած էին 3 միջին երիտասարդության տղեք: Նրանցից մեկը կանչեց մատուցողուհուն՝

– Չորս պիվա ու մի հատ կոլա կբերե՞ք?

Մյուս երիտասարդը ավելացրեց՝

– Իրա աղի ձողերով, լավ?

– Օքեյ, վերջ?

– Հա,մերսի: Առայժմ վերջ:

Մատուցողուհին գնաց:

– Դուք ջոկել եք, որ ուրիշ տեղ միշտ ասում են «իսկ ուտելու ինչ կուզե՞ք?» Էն որ ուզում են անպայման ուտացրած լինեն նոր թողնեն դուրս:– Ասեց Արմենը, նրանցից մեկը՝ դասախոսների ընտանիքից, ինքը ևս դասախոս:

– Հա ստեղ համը չեն հանում էտ առումով: Ստեղ մենակ չեն ջոկում խի են վեստեռնոտ թեմայում ինչ-որ պիռատական բաներ կախված:– ավելացրեց Տիկոն՝ մյուս տղեն:

Իրոք կովբոյական մթնոլորտում ահագին տարօրինակ էին թվում պիռատների ռեկվիզիտները՝ թրեր, կմախք, նավ:

– Լավ, մի հատ մի շեղվեք, եկեք գործից խոսանք, քանի Վիլոն չի եկել,– սա Մովսեսն էր՝ տղեքից տարիքով և կառուցվածքով ամենամեծն ու ամենափորձառուն շատ հարցերում:

Մովսեսը ինչ-որ հասարակական կազմակերպության (ՀԿ-ի) նախագահ էր, քշում էր Օպել Վեկտրա, որովհետև դրա մասերը ամենահեշտ ու էժան էր ճարելը Երևանում, մյուս բոլոր «ինամառկեքի՛» հետ համեմատած: Մովսեսը, հատուկ շուտ էր հավաքել երկու մյուս ընկերներին, որ իրենց չորրորդ ընկերոջ ծնունդի նվերը քննարկեն: Մովսեսը տիպիկ NGO-շնիկ էր, ֆինանսների հայթայթման կամ *fund-raising*-ի տեսանկյունից, որը ավելի հայտնի էր «գրանտ կայցնել» տերմինով, միշտ եղել էր հաջողակ: Գիտեր որտեղ ինչ դրամաշնորհի հնարավորություն կա, որտեղ ոնց ա պետք դիմել, ում իչքան ա պետք հետ գլորել, որ իրա ՀԿ-ն միշտ ունենա գրասենյակ, ինտերնետ ու մի քանի գունավոր բուկլետ:

– Մի շաբաթից Վիլոն 28 ա դառնում: Ինչ առնենք?

– Իրան չհարցնենք? Անկապ բան չառնենք, որ պարզվի պետք չէր,– Արմենը:

– Չէ, չէ, խոսացել են հետը... ավելի լավ ա *սյուռպրիզ* առնենք, ամեն անգամ հարցնելը արդեն չի դզում: Էն անակնկալային ռոմանտիկ կայֆերն են կորում տենց,– ասեց Մովսեսը:– Մի խոսքով ես առաջարկում են ստրիպտիզ տանենք: Նայեք՝ համ սյուռպրիզ ա, համ բոլորս կկիսենք մեր ընկերոջ ուրախությունը, համ էլ դե... ինքը սիրում ա տկլոր աղջիկներ... ինձ թվում ա...

Երրորդ ընկերը՝ Տիկոն, դեռ չէր խոսացել: Ինքը ինտիլիգենտ ընտանիքից դուրս եկած, բայց պոլիտեխնիկական տիպիկ տղա էր: Չնայած ինժեներ էր, բայց ավարտելուց հետո գնացել էր հաշվապահական ինչ-որ թանկարժեք կուրսերի ու արդեն ահագին ժամանակ աշխատում էր այդ ոլորտում: Ինքը սիրում էր ամփոփել ամեն խոսակցության վերջում:

– Լավ, ուրեմն թող լինի ստրիպտիզը, մինչև ինչ-որ ուրիշ միտք չլնի:

Մինչև էտ գարեջուրը բերեցին՝ իրա աղի ձողերով:

– Դե բարլուս, տղեք:

Էտ պահին մտավ Վիլոն.

– Էն ում թագավոր ակագուլիկ ախպերներն են? Թշերոյուղեք գալիս են:

Հայ տղեքի նույնիսկ ինտելիգենտամետ մասը առանձնանում ա առնկան պաշիկների անպակասությամբ: Մենք սիրում ենք մեր ընկերներին ու չենք ուզում դա թաքցնել:

Վիլոն նենց էր հոգնել գործից, որ ուզում էր ուղղակի խմել ու լսել ընկերների՝ «House of rising sun»-ի մեջ լուծվող անհասկանալի աղմուկը:

Ինչպես միշտ ինքը սկսեց իր սովորական «արա դե մի ծխեք էլի» ֆռագով, որը արդեն էտքան չէր ներվայնացնում ընկերներին, ինչպես առաջ, երբ նրանք դեռ լսում էին Վիլոի էկոլոգիամետ ռեպլիկները:

Գարեջրի երկրորդ «կռուգից» հետո, Վիլոն արդեն չէր կարող ապրել առանց ընկերների սիգարետախառը ծիծաղի ու ծխի: Սկսեցին հիշել հին օրեր, կատակներ, աղջիկ կպցնելու հաջող ու անհաջող փորձեր:

– Էրեգ Պրոսպեկտով իջնում էի: Ձգացի, որ դեմի մեքենան ինչ-որ ոչ ադեկվատ շարժումներ ա անում: Ինչ-որ մի բան էր ուզում անել, ու ինձ թվաց, որ ուզում էր *ռազվառոտ* մտնել՝ հատելով հոժ գիժը: Միանգամից մտածեցի՝ հարուր տոկոս կին ա վարորդը: Մեկ էլ *ռեսկի* կանգնեց ու մտավ ռազվառոտ՝ կտրեց անցավ սաղ գծերը: Նայեցի հատուկ՝ կին՝ բլոնդինկա: Տենց սեռի վարորդներին պետք ա կամ պատժել կամ անընդհատ զբաղացնել ուրիշ բանով...– Վիլոն խորացել էր:

– Սեքսով, օրինակ,– մտավ Տիկոն:

– Հա, թեկուզ: Ինչով ուզում ա զբաղացնեն, մենակ չթողնեն ռուլին նստեն,– Վիլոն ամենալուրջ թշնամին էր բոլոր կին վարորդների՝ տեսական, թե պրակտիկ:

Ստեղ Արմենը հիշեց, որ Մոսոն ինչ-որ ընկերուհի ուներ վերջերս:

– Ինչ եղավ ընկերուհիդ, Մոս?

– Դե վերջացավ: Ինչ պետք ա լիներ... իչքան էլ լավը լինի, մարդ պետք ա... կարողանա լավ կատակների վրա ծիծաղա.– Համարյա առանց տխրության ասեց Մովսեսը:

– Ընդհանրապես չէր ծիծաղում?

– Տասից երեքի վրա... Էն էլ եթե լավ ծամում դնում էի բերանը:

Կատակների գնահատելը Մովսեսի, ինչպես նաև իր 3 ընկերների համար աննկարագրելի կարևոր էր: Հաճախ նույնիսկ ավելի կարևոր, քան մեծ կրծքերը:

– Իսկ հեշտ յան տվիր?

– Արմեն ջան, հայ աղջիկների հետ դա շատ հեշտ ա: Քանի որ իրանք հարմար նստել են «օժանդակ մարդ» ֆորմա-

տի մեջ ու պասիվ ֆունկցիա ունեն հարաբերություններում, հարաբերություններ վերջացնելու համար ընդամենը պետք ա էլ չզանգել: Դա իհարկե միշտ չի նույն ձև գործում, բայց եթե մի երկու ամսվա չափ հանդիպում ես ու տեսնում ես, որ էլ չես ուզում ՝ ընդամենը էլ մի զանգի: Փորձված բան ա: Տասից մեկը կարող ա զանգի հարցնի «ի՞նչ եղավ? Ի՞նչ-որ բան ա պատահել?» կամ «ես կուզենայի քեզ տեսնել»: Մյուսները անում են էն ի՞նչ-որ հայերը արել են միշտ՝ համա-կերպվում են ստեղծված նոր վիճակին:

– Ու քեզ դա դզում ա?

– Ինձ դա ընդհանրապես չի դզում: Ինձ չի դզում, որ տե-նում եմ մարշրուտկեն կայնում ա կանգառում, մեջը տեղ չկա իրար գլխի պառկած են ու միակ նստելու տեղը դեմի նստարանն ա, բայց հայ աղջկա մտքով երբեք չի անցնի դի-մացը նստի՝ դա տղամարդու տեղ ա: Խի, կարաս ասես խի?? Ինձ չի դզում որ աղջիկների զույգեր ձեռքերը բռնած ման են գալիս ու օտարերկրացիները սխալ մեկնաբանելով կարծում են, որ Հայաստանը ուլտրալիբերալ ա՝ ամեն քայ-լին լեզբիանկեք են: Իսկ իրականում ուղղակի բռնում են, որովհետև... *վափշետը* ես ինքս չգիտեմ, խի են բռնում իրար ձեռքեր... երևի մի ուրիշ ձևի քիզարով ընկերուհիներ են:– Մովսեսի ցավալի թեման էր: Ու Արմենը բացել էր Պան-դոռայի արկղ կոչեցյալը Մովսեսի ակոհոլախառը ուղեղում:

Վեստը լցվեց: Մարդիկ խոսում էին, ռակ էին ուտում, ձևացնում էին, որ լսում են իրար ու ԽՄՈՒՄ: Ամեն ինչ գնում էր նենց, ոնց որ պտի գնար համաձայն էտ բարի «օրենս-գրքի»:

Մեկ էլ Տիկոն նկատեց, որ սեղաններից մեկի վրա աղջիկները մի տեսակ չափազանց կրքոտ էին պահում իրար ձեռքերը: Չափազանց կրքոտ նույնիսկ հայ հետեռոսեքսուալ աղջիկների համար, որոնց ձեռքերը անբաժան են փողոցում ամենասովորական զբոսանքի ժամանակ: Խմողների մեծ մասը արդեն հասկացել էր, որ բախվել են այն տեսարանի, որը սովորաբար տեսնում են մեծահասակների կինոների մեջ՝ լեզբուհիներ՝ լեզբիանկեք՝ անպուպուլ սիրելաններ: Բնականաբար դա նկատել էր ոչ միայն Տիկոն, այլ նաև մնացած բոլորը, բայց միայն Տիկոն էր էնքան խմած, որ հուզումնատենչ բացականչեց «իմ արև - լեզբիանկեք»՝ այդ ֆռազը զուգորդելով համապատասխան մատնանշումով ու շեշտակի ցատկումներով:

Վիլոն բռնեց Տիկոյի ձեռքը նենց, որ վերջինիս ուշադրությունը մի քիչ շեղեց ու կենտրոնացավ անմարդկային ցավի վրա, որ Վիլոն զուտ ընկերական մղումներով շփեց իր անմխիթար հառփած ընկերոջ վրա:

Պետք էր լինել առնվազն համասեռամուլ կաթոլիկ տերտեր չզգալու համար այն կրքոտ փոթորիկը, որը արձակեցին երկու «շուռ տված» հայ աղջիկները: Վեստում այդ պահին համասեռամուլ կաթոլիկ տերտեր չկար:

Նման ուշադրության անբռնազբոսիկության աստիճանը (այդ պահին բոլորն էին նայում իրենց սեղմած ձեռքերին ու սեքսածին հայացքներին), լեզբիական մշակույթի պրոմեթեյները ավելի ոգևորվեցին ու որոշեցին մաքսիմալը քաղել հանդիսատեսի անփոժ ուշադրությունից: Նրանց շղթայված ձեռքերը մի պահ թուլացան, երբ նրանք վեր կացան սեղանից ու «Stairway to heaven»-ի տակ սկսեցին պարել դանդաղ պար՝ մինյանց միջև թողնելով էնքան տարածություն,

ինչքանը սովորաբար բնութագրվում է «միանշանակ սեքս» իրավաբանական տերմինով:

Մի քանի վայրկյան պարելուց հետո նրանք ոչ միայն եռացրեցին Վեստի ծխախեղդ մթնոլորտը, այլ նաև սկսեցին համբուրվել՝ օգտագործելով այն եղանակները, որոնք միջին վիճակագրական քաղաքացու մոտ ընկալվում է որպես «խորը զասոս»:

Հայերին դա ոգևորեց: Հայերին դա դուր եկավ: Հայերը պահի տակ սկսեցին մոռանալ ցեղասպանությունը:

### Գլուխ 3

*Ախ չգիտեմ, ինչ է սերը, որտեղից  
ու ինչու է սիրտը իմ հանում հունից:  
Ջգացմունքը այս, եթե սեր են անվանել,  
անդադար պատրաստ եմ ես այդպես սիրել:  
**Երգչուհի՝ մայրանալուց առաջ***

Մի քանի ժամ անց Վիլոն, Մովսեսը, Արմենը ու խմած Տիկոն քայլում էին դեպի Պուշկինի փողոց: Հառփած էին բնականաբար բոլորը, բայց Տիկոյի հոսող ժպիտը մատնում էր իր թույլ օրգանիզմի առանձնահատկությունները:

– Եկեք էս լահմաջոյանոց մտնենք, – առաջարկեց Մովսեսը: – Ստեղ համ լահմաջոն ա շատ լավը, համ էլ Տիկոն մի քիչ ուշքի կգա:

– Արաա... Տեսաք, ոնց էին զասվում?? Համարյա մեր կողքը կանգնած էին: Հիմա իրանցից որն էր... հիմնականը – Սեքսի հարցերում Տիկոն ամենաանփորձն էր:

Նստեցին ինչ-որ լահմաջոյանոցում Պուշկինի վրա: Սպասարկողը սփյուռքահայ էր: Ակնհայտ Սփյուռքահայ:

– Փարև ցեզ: Ինչ գուզիք? – մոտեցավ տարիքով մեծ սպասարկողը:

Տղեքը պատվիրեցին, նստեցին, սկսեցին քննարկել Երևանի համար բավական անսովոր տեսարանը՝ լեզբուհիների լեզվական պարը:

«Օբյեկտում» լուռ էր, չափազանց լուռ: Տղեքի վրա անսովոր լռությունը սկսեց ազդել: Իրոք չէր դզում:

– Հոպար, կլնի երաժշտություն դնեք ինչ-որ?– Կանչեց Վիլոն աշխատողին: Աշխատողը ահագին զարմացած մոտեցավ ու հարցրեց «ինչ»:

– Երաժշտություն դրեք էլի: Շատ լուռ ա մի տեսակ:

– Գներեք չեմ հասգնա ինչ գսեք,– մեղմ ասեց սփյուռքահայ միջին ձեռներեցը:

Տիկոն փորձեց ներկայացնի ընդհանուր գաղափարը:

– Դե էն որ «նանանանանա-նանա-նա-նա»:- էտ պահին Տիկոյի ոտքը տրորեց Մոսոն, որ էտքան ակնհայտ ձեռ չառնի սփյուռք բարեկամին:

– Հոբար, «մյուզիք» ունես? – մասնավորեցրեց Վիլոն:

– Հա, մյուզիք, իհարգե. Թնեմ:- ու հեռացավ՝ հարստացնելով իր հայաստանյան բառապաշարը:

Մի քանի վայրկյան իրար վրա նայելուց հետո տղեքը սկսեցին կիսաանձայն խոսել: Իրանց մոտ սփյուռքահայերի երևույթը Երևանում արդեն վաղուց «թեմա» էր: Ու սա լրացուցիչ առիթ էր դա առաջ տանելու համար: Ամենաազդեցիկը տրամադրված էր Տիկոն:

– Արա, խի պտի ես Երևանում չկարողանամ կաֆեոն նորմալ հայերենով կարողանամ բան հասկացնել *աֆիցանտին*? Մի երկու տարուց սաղ սենց են լինելու ստեղ: Մենք մնալու ենք փոքրամասնություն:- պարբերական գկոտոցով համեմված խոսքը նա փորձում էր շատ լուրջ ներկայացնել, որովհետև դա իրեն իրոք հուզում էր:- Իրանց թվում ա մենք սովետի ազդեցությունից բթացած հայերն ենք, իրանք ճիշտ հայերն են: Մենք սխալ լեզվով ենք խոսում իրանք՝ ճիշտ: Հակոբը իրականում Հագոփ ա, իսկ Գագիկը՝ քաքիկ: Արա խի ախպեր: Սփյուռքահայեր՝ «go home», էլի:- Սա իր սովորական ճառի հիմնական թեզերի մշտական վերարտադրությունն էր:- Ու ամենակարևորը՝ սաղ դաշնակաֆիլ են:

Իրանց թվում ա դաշնակները ամենաազգասեր ինտիլիգենտ տարրերն են, այլ ոչ թե Երևանի բառդելների հիմնական տերերը: Իրանք չեն ջոգում, որ դաշնակը ստեղ լրիվ ուրիշ ա՝ ինչ-որ մուտանտ իշխանագրպանային կենդանի, – ստեղ Տիկոյին էլի փորձեց ուշքի բերի Մոսոն, որը ջոկեց, շուրջը նստածների դաշնակցամետ հայացքներից, որ հակասփյուռքահայ ճառը ոչ մի լավ բանի չի հասցնի: Որքան էլ շատ ընկերներ նրանք չունենան, այս կաֆեի հյուրերը արդեն ստեղ էին ու շատ ու միանգամից մի տեղում:

Հինգ բոպեից հաշիվը ուզեց Վիլոն, ուն դուր չեկավ լիբանանահայերից մեկի հակաերևանյան ակնարկը՝ «սրանք դեռ չեն հասցնա ջիշդ հայը որն է»:

Իրականում հաշիվ ուզելու գաղափարը անկասկած տեղին էր, որովհետև կաֆեում հազվադեպ էին մտնում տեղացի հայեր, առավել ևս սփյուռքին քննադատաբար մոտեցող հայեր: Հայեր, որոնք չէին հասկանում սփյուռքահայության բուժիչ դերը Հայաստանում ու ամեն ինչում:

## Գլուխ 4

*Գիշեր ու ցերեկ մի խաբար բերեք,  
Ինձանից յարիս մի բարև տարեք,  
Ասեք ԴՈՒՐՍ ԳԱ, ԴՈՒՐՍ ԳԱ էն դռնից,  
Խոսք է տվել, թող գա հարս տանի ինձ:  
**Սիլվա Չակոբյան***

Վիլոն մենակ քայլում էր արդեն Տերյանով: Տղեքին հաջող էր ասել ու բարձրանում էր Շրջանայինի մոտ՝ Մասիվի մարշրուտկա բռնելու: Անընդհատ աչքի էին ընկնում թանկ մեքենաներից բութ ու չաղ արտաքինով երիտասարդներ, ինչպես նաև միջին տարիքի՝ առավել բութ հայացքներով մարդիկ: Հիմնականում սև ակնոցներով: Չնայած արդեն մութ էր: Օգոստոսի կեսին ժամը տասներկուսին ուղղակի անհասկանալի էր՝ ինչու են բութ արտաքինով մարդիկ հագնում արևային ակնոցներ: Ուրիշ բան, եթե դրա արդյունքում բոլոր աղջիկները միանգամից ուզենային մութ ակնոցներով տղու հետ սիրով զբաղվել, բայց՝ չէ: Ուղղակի բութ արտաքինը ու սև ակնոցները հավանաբար Երևանում հատուկ էլիտար աննախադեպ մարդկանց գաղտնակող էր:

Շրջանայինի մոտ կանգնած էր սադրիչ համարով Մասիվ տանող հիմնական մարշրուտկան՝ 69-ը, որը միշտ փրկում էր ուշացած ուղևորներին տաքսիների ճանկերից: Իսկ Վիլոն իր Ֆոլցվագենով չէր այսօր եկել՝ խմելու պլան կար: Վիլոն նստեց, հագավ ականջակալները ու սկսեց լսել ինչ-որ աղմուկ:

Այդ ժամանակ երևանում ամեն ինչ հանգիստ էր առաջին հայացքից: Մարդիկ քայլում էին Օպերայի մոտով: Ոչ ոք համարյա չէր խոսում մարտի մեկի արյունլվիկ վիճակներից: Ամեն քայլին հանդիպող կարմիր բերետավորները ոչ մեկին արդեն չէին զարմացնում ու հիշեցնում երկրի ոչ նորմալ վիճակից:

Առնո Բաբաջանյանի արձանը արդեն վաղուց չէր վախեցնում ոչ մեկի, նույնիսկ ճապոնացի զբոսաշրջիկների: Ինչ-որ տեղ նաև գրավում էր արևմտածին զբոսաշրջիկների, ովքեր նկարում էին ամեն ինչ, ինչը գրավում էր իրենց մանկամիտ ուշադրությունը՝ ներառյալ Բոյուսովի կիսանդրին Թունանյանի վերջում:

## Գլուխ 5

*Սոճե-լե-լե-լե-լե*

*Սոճե-լե-լե-լե-լե*

*Սոճե-լե-լե-լե-լե-լե-լե-լե-լե*

*Սոճե-լե-լե-լե-լե-լե-լե-լե-լե*

***Անդրե***

Սովսեսը ուղարկեց *իմեյլ* Խաղաղ Հասարակության Ինստիտուտ՝ ավելի հայտնի որպես Գուտենհաուերի հիմնադրամ: Նա ուներ իրազեկության բարձրացման ինչ-որ ծրագրի միտք: Համալսարանների հետ կապված: Շատ ՀԿ-ներ ունեին մեծ ծրագրեր, բայց քչերն էին կարողանում խոստանալ 20 տոկոսը նույն դրամաշնորհատու կազմակերպությանը: Նման «օտկատային» գործարք Սովսեսը այդ Ինստիտուտի հետ դեռ չէր արել ու դեռ չէր գտել կոնկրետ «ալիք» դրա վրա դուրս գալու: Բայց աշխատում էր այդ ուղղությամբ:

Բուն ծրագիրը ենթադրում էր ներկայացնել ուսանողներին կոռուպցիայի անբարոյական կողմերը (կարծես կան բարոյական) կրթության բնագավառում: Ամեն ինչ շատ հեշտ էր. տպվում է հազար բուկլետ, ուր գրված է, որ այդ երևույթը վատն ա, ու կեղտոտ (բուկլետների մեջ Սովսեսը «մտնում ա» գումարի մոտ 30 տոկոսով): Բուկլետները բաժանվում են ուսանողներին (որոնք դրանք օգտագործում են սովորաբար, որպես ինքնաթիռ սարքելու նյութ): Հետո կազմակերպվում են կլոր սեղաններ ուսանողների հետ, որտեղ ուսանողները գալիս են, որ փախնեն դասերից: Բոլորը գա-

լիս են ինչ-որ լսարան (բայց Մովսեսի ծրագրով դա թանկարժեք աննախադեպ էլիտար վայր է՝ հյուրանոց): Հետո բոլորը նկարվում են: Նկարը ճարպիկ ձեռքերով մտնում է հաշվետվություն ու թանկանոց փայլով պատված ժպտերես երիտասարդները տարվա վերջում ներկայացվում են որպես կոռուպցիայի դեմ մարտնչող հայ ավանգարդ երիտասարդություն: Մովսեսը կարողանում ա վճարել ևս մի քանի ամսվա գրասենյակի վարձ, տպել իրանց ՀԿ-ի (ժողովրդավարական երիտասարդական հասարակական ակումբների դաշինք) բուկլետներ ու գնել քարտուղարուհուն կոնֆետներ:

Ի դեպ Մովսեսը քարտուղարուհու հետ հանդիսանում էր բավական ոչ հայեցի հարաբերության մեջ: Վերջինս «բաժանված» կատեգորիայի դասական օրինակ էր:

Եվ այսպես Մովսեսի սովերային գործարքը ԽՀԻ-ի հետ լուսանային ցատկերով տանում էր իր հայրենիքը դեպի պայծառ անկաշառ Հայաստան: Մովսեսը ուրախ էր: Քարտուղարուհին՝ բավարարված: Բոլորը գոհ էին: Գուցե դժգոհ էր առաքելական եկեղեցին, բայց նրան ոչ մեկ այդ պահին չէր հիշում:

Ուրբաթ առավոտ էր: Մովսեսին զանգեցին:

– Բարև ձեզ, ես ուզում եմ խոսել Մովսես Իսրայելյանի հետ:

– Լսում եմ ձեզ:

– Պարոն Իսրայելյան, ձեզ անհանգստացնում են Ազգային անվտանգությունից:

Մովսեսի քաջալացող ճակատից մի քանի լուռ վայրկյանի ընթացքում կաթաց երեքից-չորս քրտինքի կաթիլ: Նա փորձեց հիշել իր՝ օրենքը անենալուրջ շրջանցող գրանտը:

Չկարողանալով կենտրոնանալ մեկի վրա՝ կիսակցկտուր պատասխանեց:

– Ինչով կարող եմ օգնել? Ես գրանցված Հասարակական կազմակերպության նախագահ եմ:

– Մեզ անհանգստացնում է ձեր օրեցօր մեծացող թշերի քանու տակ ծածանվող զանգվածը:– Խոսացողը չկարողացավ զսպել ծիծաղը ու սկսեց հռչակալ:

Մովսեսը հասկացավ, որ դա իր ՀԿ-ական (են-ջի-օշնիկ) ընկեր Ստյոպան էր, ուն հետ միասին ահագին գրանտեր էին գրել դեռ գրանտային տեսանկյունից կուսական 90-ականներին:

– Դեբիլ, եթե քեզ թվում ա խնդալու ա, դու լռիվ... - Մովսեսը խորը հանգստացող շունչ քաշեց: Ստյոպան իր մոտ ընկերներից էր, որը միշտ տենց կատակներ էր անում: Դե համարյա տենց: Առայժմ ամենակտրուկը հարկայինի ներկայացուցիչն էր, բայց սա... ահագին առաջ էր գնացել:

– Մոս, մի հատ պրոտեկտ կա: Պետք ա հավաքվել: Ես Ալյասկայի հիմնադրամն ա հայտարարություն տվել երիտասարդական տոլերանտության ծրագրի մասին:

– Տոլերանտություն? Էլի գոմիկների պրոպագանդա?

– Չէ, ուզում եմ Սփյուռքահայության հարմարեցման ծրագիր անեն: Ինչ-որ ալիք ունես էտ հիմնադրամի վրա? – Այդ հիմնադրամի հետ Մովսեսը վաղուց էր հարթել երկխոսության հնարավորությունը:

– Լրիվ նորմալ ա, ապեր... արի հանդիպենք խոսանք: Դու ավելի լավ ա էս ԽՀԻ-ի տնօրենի վրա ալիք գտի...Թամարա Գեորգիևնան ա թույն դրամաշնորհ հայտարարելու հեսա... բայց իրանց վրա ոչ մի «պաղխող» չունեն...

Ամառվա վերջին շաբաթները արդեն հիշեցնում էին մոտեցող աշնան մասին: Վերջին օրերն էին, որ կարելի էր քաղաքով քշել առանց խցանումների, առանց ուսանողների աննորմալ փողոց անցնելու արշավների: Երևանցիների քաղաքում մնացած մասերը երազում էին, որ հանգստացողները չվերադառնան իրենց արձակուրդներից, իսկ ուսանողները դուրս մնան համալսարաններից ու չլցնեն խաչմերուկները (ու ոչ միայն խաչմերուկները) բազմակիլոգրամային մարդկանց զանգվածներով: Ի դեպ երկնիշ տնտեսական աճը զգացվում էր երևանցիների վրա. շատերը արդեն չաղացել էին այնքան, որ ավտովթարի արդյունքում կարող էին շատ ավելի մեծ վնաս հասցնել մեքենային, քան իրենց:

Քաղաքացիական հասարակության դաշտից Մովսեսը հիասթափվել էր վաղուց: Հավանաբար դրա համար էր իր մոտ ստացվում այդ գործը այդքան հարթ, առանց էմոցիաների: Միաժամանակ նա հիասթափվել էր Արևմուտքի «զարգացման ծրագրերից», որոնք միտված էին հայերին իջեցնել ծառերից և ներարկել օրենքի հանդեպ եղբայրական սեր «կլոր սեղանների» և միլիոնավոր չկարդացվող բուկլետների միջոցով: Հայաստանում հասարակության դաշտը այնքան այլանդակված էր, ու ոչ անկեղծ, որ Մովսեսը վստահ էր՝ եթե մի օր հայտարարվի դրամաշնորհային ծրագիր Հայաստանում ծովափղերի իրավունքների պաշտպանության թեմայով, ապա միանգամից կհայտնվեն հարյուրավոր ՀԿ-ներ, որոնք իրենց ամբողջ կյանքը արդեն մի քանի տասնամյակ ա, ինչ նվիրում են ծովափղանպաստ գործունեությանը ու դեռ Մովսեսի ժամանակներից էին ահազանգում ծովափղերի անմխիթար վիճակի մասին:

Շաբաթ օրը Մովսեսը պետք ա մասնակցեր մեծ միջոցառման՝ հակակոռուպցիոն կոնֆերանսի: Այնտեղ լինելու էր ողջ ՀԿ-ական *քոմունդն* ու պարզապես ֆուրշետ սիրող ազգաբնակչությունը:

## Գլուխ 6

*«Չեն կարծում, որ ընդհանրապես գոյություն ունի «խելացի վրացի» հասկացություն»:*

***Արրահամ Բախչագույան,  
ՀՀ Կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի փոխնախագահ***

Նույն ուրբաթ առավոտվա արևի մի քանի ճառագայթներ արտացոլվում էին Թումանյանով բարձրացող Պեժոյի սպիտակ պատուհաններում: Դեկին նստած երիտասարդ աղջիկը բացահայտում էր իր 18-րդ ծննդյան տարեդարձի նվերը՝ նոր մեքենան ու վարորդական իրավունքները:

Սովորաբար երևանում հեշտ ա տարբերել կին և տղամարդ վարորդներին՝ կանայք աչքի են ընկնում: Իսկ առավել աչքի են ընկնում կանայք կամ աղջիկներ, որոնք իրենց վարորդական իրավունքները ստացել են մեքենայի հետ մեկ փաթեթում, ինչպես դա Անուլիկի դեպքում էր, Բրյուսովի 2-րդ կուրսի ուսանողուհի, որը Սիլվա Յակոբյանի պահանջատեր հարսի երգի դմբդմբոցի տակ անհամբեր սպասում էր Պրոսպեկտ/Թումանյան խաչմերուկում կանաչ լույսին:

Բրյուսովի վարդագույն պատերը անխնա ծածկում էին ներքին կյանքը արտաքին շոռաչք աշխարհից, իսկ մասնավորապես համալսարանի դիմաց համաչափ տեղադրված երիտասարդ տղաներից թաքցվում էր համալսարանի գանձը՝ տղա/աղջիկ անհամաչափ տոկոսային հարաբերությունը: Բայց այդ ամենը մի շաբաթից, իսկ առայժմ Անուլիկը գնում էր վերահանձնելու իր ֆրանսերենի քննությունը:

Անուլիկը կտրվել էր քննությունից: Անուլիկը չէր ծնվել կրթությունը խրախուսող աստղի տակ: Անուլիկը բութ էր: Դժբախտաբար իր համար քննություն ընդունողը մայիսին կին էր և քննության ընթացքում բթությունը ավելի ազդեցիկ դեր էր խաղում, քան իր հմայքը, որը բավական շեշտված դրսևորվում էր ձիգ վերնաշապիկի տակից: Արդյունքում կանաչ լույսի վառվելուն պես Անուլիկը պետք ա մոտենար համալսարանին ու վերահանձներ քննությունը:

Ֆրանսերենի ամբիոնում տիրում էր հաճելի լռություն, ամառ, նարնջի հյութ, տվիքս և գինի, ինչպես նաև ամբիոնի քարտուղարուհին և միակ ընդունող հերթապահ դասախոսը՝ Արմենը:

Նախորդ օրը ամբիոնի վարիչի ծնունդն էր, որը սկսվեց շնորհավորանքով, իսկ վերջացավ Ռուս-Վրացական հակամարտության քննարկությամբ: Բոլորը միաձայն դատապարտեցին Վրաստանի ղեկավարին ինչպես և վայել է Ռուսաստանի դաշնակից երկրի քաղաքացիներին: Քարտուղարուհին վստահ էր, որ պատերազմը լիովին իր ընկերուհի ժանետի նավան էր, որը էտ օրերին հանգստանում էր Քոբուլեթում: Արմենը փոքր հեզմանքով նույնիսկ նշեց, որ Սաակաշվիլին փորձեց ծնկի իջեցնել Ռուսաստանին, բայց արի ու տես, որ չկարողացավ: Փոխարենը Սաակաշվիլին «ռաստեկավ հաստ խնդրի»: Հաստ ռուսական խնդրի...

## Գլուխ 7

*«Իմ բառերը ներկայացրել են կոն-  
տեքստից դուրս:*

*Ես վրացիներին չեմ վիրավորել»:*

**Արրահամ Բախչագուլյան,  
ՀՀ Կենտրոնական ընտրական  
հանձնաժողովի փոխնախագահ**

Մեքենաների աննրբանկատ ազդանշանները և վարորդ-  
ների քաջալերող հայիոյանքները հուշեցին դիմացի մեքե-  
նայի վարորդին, որ կարմիր լույսը արդեն զիջել է իր դիրքե-  
րը Պրոսպեկտի խաչմերուկում: Մի քանի վայրկյանից շար-  
քը շարժվեց՝ անրապնդելով վարորդների մոտ կանանց և  
մեքենաների անհամատեղելիության երևանցիների նախա-  
պաշարմունքը:

Կես ընթացքի սպիտակ Պեժոն արդեն կայանվում էր  
Բրյուսովի կիսանդրուց մի քանի մետր ներքև: Ջանգեց հե-  
ռախոսը.

– Աննա, հանձնեցիր? – անհույզ ձայնով հարցրեց Անու-  
լիկի մոր ձայնը:

– Չէ, դե ասի կզանգեն, որ հանձնեն, մամ:

– Նորմալ պարապել ես?

– Մամ, դե իջքան կարացել եմ նայել եմ էլի: Ես դասախո-  
սը պտի որ հեշտ դնի: Ասում են բարի ա: Համ էլ խի պտի  
չդնեն, ես վճարովի եմ: Իրանց ձեռ ա տալի իմ մնալը, նենց  
որ դուրս չեն թողնի: *Վոփշմ*, կզանգեն: Ռավայ:

Անուլիկը մտավ ներս, բարձրացավ ֆրանսերենի ամբիոն, թակեց դուռը: Մի քանի ռոպեից Արմենը հանել էր քննական հարցերն ու տոմս քաշելու առաջարկություն արել: Անուլիկը անհնքնավստահ շարժումով վերցրեց տոմսը և ուշադիր ուսումնասիրեց այն: Իր դեմքի արտահայտությունից կարելի էր կռահել, որ վիճակը ահագին ծանր էր:

Արմենը չնայած բարի մարդ էր, բայց համ էլ պատասխանատու: Եթե ուսանողը ագրեսիվորեն անխելք էր պատահում, նա առնվազն հետ էր ուղարկում՝ ևս մեկ անգամ անքուն մի քանի ժամ անցկացնել նյութերը սովորելու վրա: Իսկ Անուլիկը դեռ ուներ երկրորդ լիկվիդի հնարավորությունը:

– Դրեք էլի, ես իսկականից չեմ հասցրել սովորել: Սեպտեմբերին ես ձեզ կգամ կպատասխանեմ էլի:– Անուլիկի խոսքը զուգադրվում էր համապատասխան կիսաժպտացող հայացքով, որը շատ անգամ էր դժվար վիճակներից հանել Անուլիկին:

– Աննա ջան, ուրեմ կանենք սենց,– սկսեց Արմենը,– հիմա դու կգնաս, կհանգստանաս մի շաբաթ մինչև արձակուրդները վերջանան, իսկ սեպտեմբերի 15-ին կգաս երկրորդ լիկվիդի ժամանակ հանգիստ կպատասխանես:

Անուլիկի հմայքը այս անգամ չբերեց արդյունքի: Նա անտրամադիր իջավ աստիճաններով, անցավ տուրնիկետը ու դուրս եկավ շենքից՝ ջղայնացած հայացք շարտելով Վալերի Յակովլևիչի անտարբեր կիսանդրու վրա:

Մեքենան նստելով, Անուլիկը զանգեց իր մամային և տխուր ձայնով նկարագրեց տեղի ունեցածը: Տհաճ խոսակցության հետ զուգահեռ նա փորձում էր մեքենայով շրջվել և քշել հակառակ ուղղությամբ՝ բնականաբար խախտելով հոծ գիծն, ինչպես նաև Սարյանից մտնող «Գայիշնիկի» ան-

դորրը: Գայիշնիկի Տոյոտան հասկացրեց Պեժոյի վարորդին, որ պետք է կանգնել:

Պեժոյին մոտեցավ ավագ լեյտենանտը և դատելով իր շրթունքներից արձակված աղմուկից՝ ներկայացավ:

– Ձեր փաստաթղթերը: Հո՞՞ն գի՞ծ եք խախտել և հեռախոսով էիք խոսում վարելու ընթացքում:

Դժբախտաբար Անուլիկի համար հայ գայիշնիկները արդեն մի քանի տարի է, ինչ տուգանում էին նաև կանանց: Ընդհանրապես «գայիշնիկության» աշխարհում հետաքրքիր մետամորֆոզներ էին եղել. գայիշնիկներին կարելի էր տեսնել խաչմերուկներում երթևեկություն համակարգելիս: Իրոք նոր ժամանակները ստիպում էին, որ նրանք թողնեն իրենց բուն գործը և սկսեն օգնել երթևեկությանը:

– Հո՞՞ն գի՞ծ? Ստեղ չէր կարելի թեքվել?,– շփոթված հարցրեց Անուլիկը:

– Էս իրավունքները ծնունդիտ նվեր ես ստացել աղջիկ ջան? Ինչ գործ ունես ռուլին, եթե չգիտես հո՞՞ն գի՞ծը որն ա? Հիմա ակտ եմ գրում ու մյուս անգամ աշխատի տաքսիով գնաս-գաս:

Ակնհայտորեն սա Անուլիկի լավագույն օրը չէր: Նա խելոք ստորագրեց ակտը, նստեց մեքենան և շարժվեց: Գայիշնիկի իրականացրած արդարության թթվաշ համը այնքան ուժեղ էր այրում աղջկա բերանը, որ Անուլիկը նույնիսկ հագավ անվտանգության գոտին և մեքենան մի փոքր հետ քշելիս իրոք նայեց հետևի կողմ:

Անուլիկը վերադարձավ տուն, խոսեց մոր հետ, մի քիչ վիճեցին և փակվեց իր սենյակում, որի պատուհանները նայում էին Վարդան Մամիկոնյանի վճռական արձանի վրա: Անուլիկի մայրը լուրջ անհանգստացած էր:

## Գլուխ 8

*«Ես հպարտ եմ, որ մեր առաջնորդը (Արթուր Բաղդասարյան) իր եվրոպական այցելություններում թողնում է հետքեր թերթերում, այլ ոչ թե մյուսների (Սերժ Սարգսյան) նման՝ կազինոներում»:*

**Սամվել Ֆարմանյան,  
ՀՀ նախագահի մամուլի խոսնակ**

Վիլոն դեռ չգիտեր, որ այս ուրբաթ ինքը պետք ա հաճելիորեն զարմանար՝ տեսնելով Ալիսային ոչ միայն ժպտալիս, այլև իր աչքերի մեջ երկար նայելիս:

Սովորականի նման Վիլոն մտավ բանկի շենք, արագ բարձրացավ լիֆտով իր 4-րդ հարկը և արագ մեյլն ու *օրնոկլասնիկների* մեսիջները կարդալուց հետո, անցավ գործի: Շաբաթվա վերջին օրն էր և պետք էր մի քանի հաշվետվություն գրել, ինչպես նաև հանդիպել այդ տիպի հաճախորդին, որը ուզում էր վարկ և վստահեցնում էր, որ եկամտի առումով իր մոտ «սաղ տոշնի ա, ուղղակի թղթի վրա հո չի կարա սաղ եկամուտը ցույց տալ...»:

Ձանգեց Վիլոյի հեռախոսը: Բանկի կառավարիչն էր...

– Վիլեն, ժամը հինգին խնդրում եմ մտի մոտս, մինչև գնալդ մի քանի հարց կա:

– Օքեյ... հինգին կլինեն,– Վիլոն մի քիչ զարմացավ՝ կառավարիչը հաճախ չէր զանգում կամ հանդիպում իրեն: Սովորաբար լուրջ առիթ էր պետք: Չնայած վերջին տարում

նրա բաժնի գործերը ավելի քան լավ էին գնում, բայց Վիլոն ամեն դեպքում աչքի տակով անցավ [careercenter.am](http://careercenter.am)-ով:

Ժամը տասին Վիլենին զանգեցին ներքևից և տեղեկացրեցին, որ եկել ա ոմն Առնոլդ Մնացականյան վարկի հարցով: Վիլենը խնդրեց նրան ուղեկցել իր սենյակ և սկսեց պատրաստվել տիաճ խոսակցության: Նորից բացեց *օղնոկլասնիկները* և տեսավ, որ իրեն է գրել նախկին ընկերուհիներից մեկը... Դեռ ուսանողական տարիների... Այն ժամանակ Վիլոն դեռ չգիտեր, որ կստեղծվի մի կայք, որտեղ կհայտնվեն բոլոր այն մարդիկ, ում նա երկար ժամանակ փորձում ա մոռանալ: Այդ կայքի մեծագույն թերություններից ա այն, որ դժվարացնում ա Վիլոյի նման մարդկանց հանգիստ ասել ժամոների վերջում՝ «դե ես քեզ կզանգեմ» և վստահորեն կորել:

Բացի դրանից, այդ կայքի հետաքրքիր առանձնահատկություններից ա այն, որ հայ աղջիկներին օգնում է հաղթահարել առաջին քայլն անելու կաշկանդվածությունը: Եթե փողոցում շատ աղջիկներ կաշկանդվում են պատասխանել առաջին հայացքից բավական պարզ «Ժամը քանիսն ա» հարցին, ապա *օղնոկլասնիկներում* իրենց հանդգնությունը հասնում ա ձեր նկարը բարձր գնահատելուն, ինչպես նաև «շատ կայֆ նկար ա» ֆռազը գրելուն: Մի խոսքով սեռական հեղափոխության առաջին, բայց վստահ աղավնին իր առաջին քայլերն էր անում Արարատյան դաշտում:

Վիլոն չառավ նախկին ընկերուհու էլեկտրոնային բարևը և պարզապես փակեց էջը:

Դուռը ծեծեցին և ներս մտավ վարկատենչ Առնոլդ Մնացականյանը: Դա բավական բոյով, ինչպես նաև բուսաթով միջին տարիքի մարդ էր, որի բեղերից և ակնհայտորեն անտեղի կախած շագանակագույն օձիքից կարելի էր դատել,

որ նա բուսնում էր փոքրաթիվ բնակավայրից, կրթությունը միջին կամ ուսումնարանային էր, և ունի լավ բիզնես, որի ակունքները կարող են լինել բավական կասկածելի:

– Բարև ձեզ, Վիլեն,– շատ կենսուրախ ժպիտով սկսեց Մնացականյանը:– Մեր երեկվա խոսակցությունից ես մի քիչ մտածեցի, որ լավ կլնի ստեղ գրուցենք, որ ... դե ավելի լավ հասկանանք իրար... Սա իմ բիզնես այցեքարտն է,– գրական օժանդակ բայը արտասանելով՝ քաղաքացի Մնացականյանը տվեց Վիլոյին այցեքարտ, որի սև ֆոնին գրված էր «Աշոտ Մնացականյան Վալոդիայի, բիզնեսմեն» և հեռախոսի համարը: Քաղաքացի Մնացականյանը չուներ էլեկտրոնային հասցե:

Վիլոն ուներ բավական լուրջ հակակրանք գրական «է» օժանդակ բայի նկատմամբ, որը ոմանք անբնականորեն օգտագործում էին խոսակցական լեզվում և խոսքը դարձնում իր կարծիքով կեղծ ու անբնական:

– Այո, հիշում եմ, շատ հաճելի աս: Խնդրեմ, նստեք,– Վիլոն ծանր սրտով փոխանցեց իր այցեքարտը քաղաքացուն և սկսեց բացատրել վարկային աշխարհի յուրահատկությունները:– Պարոն Մնացականյան, միանգամից պետք ասես, որ վարկի տրամադրման համար գոյություն ունեն հստակ եկամտային շեմեր: Կոնկրետ ձեր հայցած վարկի համար անհրաժեշտ աս, որ ունենաք ամսական մեկ ու կես հազար դոլարին համարժեք եկամուտ և բերեք կայուն եկամտի հաստատող փաստաթուղթը: Ես հասկանում եմ, որ դուք...

– Նայի, Վիլեն ջան: Ոչինչ, որ դու-ով եմ խոսում, ես հասարակ մարդ եմ, սիրում եմ հասարակ խոսալ,– ասեց մի քանի թույլ առաջ պոետիկ օժանդակ բայ օգտագործած քաղաքացին:– Ես անկեղծ կիսվեմ հետդ, որ, նայի ես... ինքս ամիսը եկամուտս 3 հազար դոլար աս, մաքուրով,– վերջին բառը նա արտասանեց ավելի ցածր ու մի տեսակ

խորամանկ տոնի ու հայացքի զուգակցությամբ, որի արդյունքում Վիլոն իրեն զգաց ինչ-որ վատ բանի հանցակից:

– Ես հասկանում եմ, պարոն Մնացականյան, բայց ինչպես ասեցի...

– Սպասի, ցավդ տանեն, սպասի ասեն, հետո կասես:– Ընդհատեց աժիոտաժի մեջ մտնող քաղաքացին:– Ես անում եմ լուրջ բիզնես: Տոպրակի բիզնես:– Նրա ոգևորված տենդորը ենթադրում էր, որ քաղաքացին ակնկալում ա ոգևորություն դիմացինից... հոգնած հայացքով լսող դիմացինից...– Ուրեմն բոլոր գրքերի, տետրերի ու խոսքի... դե էտ սաղ ինչ-որ պետք ա ունենա տոպրակի կազմ, էտ ես եմ անում: Հիմա լսի ամենակարևորը: Էս տարի սաղ գրքերի կազմերի չափը փոխվելու ա: Էտի ինձ ընենց մարդ ա ասել, որ ... ինքը դրա մեջ ա ու դրա... էտ ղեկավարներից ա: Հիմա, նայի, ես էտ ինֆորմացիան ստացել եմ ու էտ մարդը դե իրա փայլ կստանա, բայց ամենակարևորը, որ էտ չափերի մասին էլ համարյա ոչ մեկ չգիտի ու սեպտեմբերի մեկին, որ գրքերը սաղին տան, սաղ պտի գան իմ տոպրակի կազմերը առնեն, որովհետև մյուս սաղ արտադրողների կազմերը չեն բռնի գրքերին:– Բիզնեսմենի ոգևորությունը աճում էր ամեն վայրկյանով: Նա զգում էր իրեն ինչպես երևի կզգար մարդ, եթե 50 տարվա սառեցումից հետո դուրս բերեր ինչ-որ մեկի ու սկսեր իրան պատմել վերջին տեխնիկայի նվաճումներից:– Հիմա մնաց մի շաբաթ դպրոցներին: Իչքան շուտ ու շատ հիմա ինձ կարողանաս տաս, էտքան շատ, դե արդեն, վառի, Վիլ ջան, ինչ թվերի մասին ա խոսքը... մի խոսքով եթե հիմա ինձ «պաձերժկա» անես, ԵՐԿՈՒՍԻՍ ուսումնական տարին էլ շատ հաջող կսկսվի:

Վերջին ֆռազը նշանավորվեց քաղաքացու ոգևորության գագաթնակետով, որը համենվեց մի աչքը խորամանկորեն թարթելով, ինչը խոստանում էր Վիլոյին զգալի գումար, եթե

օգնի քաղաքացուն ստանալ վարկ: Վիլոն վերջին 10 րոպեների ընթացքում լուռ էր ու դժբախտ: Նա փորձում էր որոշել արդյոք արժի կանչել անվտանգությունը՝ քաղաքացուն անվերադարձ դուրս հրավիրելու համար, թե փորձել համբերատար, առանց շատ նեղացնելու մերժել բեղավոր քաղաքացուն: Այդ ժամանակ զանգեց Վիլոյի բջջայինը: Նա սովորաբար հանդիպումների ընթացքում չէր պատասխանում, որպեսզի չվիրավորի կարևոր հաճախորդների: Սա սովորական դեպք չէր, Վիլոն առանց երկմտելու հանեց հեռախոսն ու պատասխանեց:

– Հա, Մոս:

– Ապեր, ձեր մոտերքն եմ: Եթե ազատ ես, դուրս արի *լանչվենք*:– Մովսեսը չէր սիրում լանչել մենակ, իսկ իր շուրջ սովորաբար լինում էին իր բնագավառի մարդիկ: Նա չէր ուզում հաց ուտել ՀԿ համայնքի հետ:

– Հեսա կիջնեմ:– Հեռախոսը դրեց և միանգամից անցավ քաղաքացուն հիասթափեցնելու աստվածահաճո գործին:– Ես ձեզ ոչ մի բանով չեմ կարող օգնել: Այն, ինչի մասին դուք խոսում եք, լուրջ հակասություններ ունի Հայաստանի Հանրապետության օրենքի հետ: Իսկ ես օրենքի մեծ երկրպագու եմ: Կներեք, ես ունեմ կարևոր հանդիպում,– վերջին արտահայտությունն արտասանելով՝ Վիլոն մեկնեց ձեռքը ակնհայտորեն մանթրաշի մեջ ընկած քաղաքացուն: Քաղաքացին դուրս եկավ առանց ձեռքը սեղմելու և կորավ դռան հետևում:

## Գլուխ 9

*«Այո, մեր ձայները գողացել են, և մենք պայքարելու ենք հանուն արդարության մինչև վերջ»:*

**Յեղիմե Բիշարյան,  
ՕԵԿ**

- Երկու շաուրմա, երկու թան:
- Ամեն ինչով?
- Մեկը առանց սոֆի,– ասեց Վիլոն նստելով Շաուրմա-յանոցի անկյունի սեղանին:
  - Ինչ ա ժամո ունես? – կատակով հարցրեց Մովսեսը,– կարողա Ալիսան հասկացել ա, ինչ գամձ ա կողքը աշխատում:
  - Էէ... արա սոված մեռնում եմ... էս անասուն ռաբիզ երգերը խի են ստեղ միշտ դնում,– Վիլոն չէր սիրում ռաբիզ երգեր: Մի ժամանակ բիթլաման էր, հիմա լսում էր շատ բաներ, բայց ոչ թաթուլախառը մուղամ:
  - Նայի: Ալիսայի պահով... մի անգամ էլ թեթև «զախոդ» կանեն, եթե էլի նույն ձև պահի... կժանոթացնես քարտուղարուհուդ հետ,– կատակով ավարտեց լուրջ մտահոգված նախադասությունը Վիլոն:
    - Վիլ ջան, լսի ուրեմն,– էտ պահին եկավ շաուրման իրա թանով:– Մերսի: Ուրեմն, գնում ես հիմա լանչից հետո իրա մոտ: Ասում ես « Ալիսա, ձեր բաժնում պիվա խմել թողնում են?» ինքը կասի դե «չէ»... նույնիսկ կժպտա, եթե գոնե մի քիչ հունորի զգացում ունի: Դա խայծն ա: Իրա մոտ հետաքրքրություն ա առաջանում: Յետո կասես «Մեր մոտ էլ...

Յուսով եմ հասկանում ես, էտ ինչ ա նշանակում» ինքը կասի «Ինչ?»: Դու կասես «Դե... նշանակում ա, որ ուրիշ տեղ պտի գնանք խմենք: Բայց էսօր զբաղված եմ, կներես: Կլնի մի ուրիշ օր?»:

Վիլոն սկսեց ծիծաղալ:

– Լսի, ինքդ էս սա մտածել? Վերջն ա:– Վիլոյի դուրը մողելը եկավ:

– Չէ, տատիս էր միշտ պատմում,– Մովսեսը արդեն վերջացնում էր շաուրման:– Ու ամենակարևորը վերջում զգա իչքանով ա կուտը ուտում:

– Ոնց? Ու խի եմ ասում, որ էսօր չեմ կարա?

– Որովհետև ուրբաթ իրիգունը դժվար թե պլաններ չունենա: Յամ էլ անպատրաստ տեղից չես կարա ասես կհամաձայնվի, թե կսկսի կմկմալ, դրա համար, որ ասես «էսօր չեմ կարա, արի ուրիշ օր» էտ համ քեզ նահանջի տեղ ա թողնում առանց մանթո ընկնելու, եթե չկանի, համ էլ... հունորով ձև ա էլի: Յա, ու եթե համաձայնվի, հանդիպի ու միանգամից ամուսնացի ու ինձ էլ քավոր նշանակի: 28 դառար, այ քաքլան:

– Եթե տենց թույն բան ա ամուսնանալը խի մի տարուց բաժանվեցիր Սիլվայից?,– ասեց Վիլոն ու հետո փոշմանեց, որովհետև Մոսոն չէր սիրում խոսել իր առաջին կնոջից:

– Լավ, անցանք առաջ: Մեքենաս ա փչացել: Արա ինչ տուֆտա մեքենա ա էտ Վեկտրան... Եթե ուզող լինի, ձեմ հանի:

– Չես կարա մի հատ դրամաշնորհ կայցնես, որը հատուկ նվիրված լինի մեքենայիդ հարցերին: Մի քիչ անկեղծ գրանտ էլի: Ու գրի, որ հոգնել ես բուկլետներից խնայված փողով մեքենադ սարքես, այլ միանգամից ուզում ես...– Վիլոյի սառկազմը ընդհատեց մատուցողուհին, որը բերեց Մովսեսի խնդրած հաշիվը: Մովսեսը հանեց փողը:

- Էէէ, դե թող տամ էլի:
- Համը մի հանի, ապե: Ես եմ կանչել լանչի, նենց որ նստի տեղդ:

Տղեքը դուրս եկան շաուրմայանոցից փայտի ձողերը բերաններում: Վիլոյի հետլանջյան ուրախ դեմքը մի քիչ լրջացավ ինչ-որ մտքից:

– Լսի, էսօր կառավարիչը կանչել ա օրվա վերջում մտնեն մոտը... ինչ-որ բան ա ուզում ասի: Վափշե չեմ ջուկում, ինչ ա եղել...

– Խի ես տենց ծանր տանում? Կարողա լավ բան ա ասում: Նորմալ գնումա չէ սաղ մոտդ? Քաթեր-բան հո չես կերել վերջերս?,– Մովսեսը գիտեր, որ Վիլոն լավ աշխատող ա ու իր գործը իսկականից միշտ լավ ա անում:

– Չէ, բան չկա: Լավ, ես գնացի: Մերսի թագա ֆլիրտի համար,– ժպտալով ասեց Վիլոն,– եթե աշխատի, կիրակի պատիվ եմ տալի:

– Դավայ, հաջող:

Տղեքը ջիգյարով հաջող ասելուց հետո ցրվեցին գործերով:

## Գլուխ 10

*«Մենք միացել ենք կոալիցիային, որպեսզի կարողանանք մեր ընտրողների առջև կատարել խոստումները»:*

**Յեղիմե Բիշարյան,**

**ՕԵԿ**

Ալիսան կանգնած էր նեսկաֆեի մեքենայի մոտ, երբ խահանոցի համար հարմարեցված նկուղում հայտնվեց Վիլոն:

– Վիլո, սուրճ կխմես? – ահագին ժպտալով ասեց Ալիսան՝ ջերմ հայացքով խառնելով Վիլոյի պատրաստած պլանը:

– Հա... եթե դժվար չի...

– Շաքարով?

– Հա, երկու գդալ,– Վիլոն վերգտավ վճռականությունը ու երկրորդ փորձից սկսեց Մովսեսի ծրագրի իրականացման առաջին փուլը:– Ալիսա... իսկ,– Ալիսան ժպտում էր: Ավելին՝ նայում էր Վիլոյի աչքերի մեջ: Երկուսի միասին:– Ալիսա, իսկ ձեր բաժնուն պիվա խմում են?

– Հեհե, չէ,– թեթև ծիծաղալով ասեց Ալիսան,– Ինչի?

– Մեր մոտ էլ չեն թողնում,– Վիլոն վստահ հետևում էր Մոսոյի ռազմավարությանը:

– Հմմտ,– Ալիսան ժպտալով նայում էր Վիլոյին: Ինչ-որ բան փոխվել էր: Փոխվել էր դեպի լավը, դեպի ջերմը, դեպի հնարավոր ժամոց:

– Հասկանում ես դա ինչ ա նշանակում?,– Վիլոն լուրջ նայում էր Ալիսայի բոլոր աչքերի մեջ:

– Ինչ?

– Նշանակում ա,– ավելի ցածր ու ինտիմոտ ձայնով ասեց,– որ ուրիշ տեղ պետք ա խմենք... բայց ես...

– Հահա, դեմք ես,– Ալիսան սկսեց ծիծաղալ: Վիլոն դեռ չէր տեսել Ալիսային ծիծաղալիս: Պարզվեց՝ Ալիսան ծայրահեղ հմայիչ ու մեղմ ծիծաղ ուներ: Վիլոն նաև նկատեց, որ վերնաշապիկի երկու կոճակներն են այսօր արձակած... Ինչ-որ բան փոխվել էր... Ալիսայի ինքնապաշտպանության նշանները էլ չկային:

– Հա... բայց ես էսօր...– Վիլոն չհասցրեց վերջացնի ու նեղվեց դրանից: Վախեցավ, որ անավարտ մոդելը չի աշխատի: Բայց իզուր:

– Լսի. էսօր մի քիչ հարմար չի, բայց եթե վաղը լինի, նորմալ ա,– ասեց Ալիսան: Սուրճը արդեն պատրաստ էր: Լցրեց բաժակի մեջ:

– Ո... որտեղ?,– մի քիչ արգելակելով՝ հարցրեց Վիլոն:

– Վեցին, Թամանյանի մոտ,– Ալիսան ժպտաց ու առաջին անգամ Վիլոն իր վրա զգաց Ալիսայի ֆլիրտային ժպտի ողջ հզորությունը:

Ալիսան գնաց խոհանոցից՝ թողնելով Վիլոյին նոր անսովոր հաճելի զգացմունքներով: Մի քանի վայրկյանից Վիլոն վերադարձավ սենյակ: Եթերային տրամադրությամբ նստեց կոմպի դիմաց: Բացեց առաջին պատահած սայտը՝ օդնուկլասնիկին: Փակեց այն: Սկսեց աշխատել:

Սենյակ մտավ Արսենը ինչ-որ երիտասարդ ուզբեկի հետ:

– Վիլ ջան, ծանոթացի, սա Չինգիզն ա,– ու սկսեց ներկայացնել նոր ստաժորին իր հակահիգիենիկ ռուսերենով:

Վիլոն ծանոթացավ ու արագ բացատրեց ստաժորների պարտականությունները:

– Ну фсо, я ухадил,– արտաբերեց Արսենը,– ապեր, դե դու ռուսերենից լավ ես, նենց որ էս հարիֆին քո մոտ ենք բան արել էլի: Ես հելա, Վիլ ջան:

Մի քանի ժամ աշխատելուց հետո պարզվեց, որ «հարիֆ ուզբեկը» Արսենից մի քանի անգամ լավ էր հասկանում բանկային հարցերը, չնայած նոր էր ավարտել իր ԲՈՒՀ-ը:

Իսկ այդ ժամանակ արդեն մոտենում էր օրվա վերջը: Եթե չլիներ էտ տհաճ սպասողական վիճակը կապված կառավարիչին հանդիպելու հետ, Վիլոյի մոտ կարձանագրվեր ամենհաճելի ու հաջող օրերից մեկը վերջի մի քանի ամսում:

## Գլուխ 11

*Երևան, Երևան գնալու են,*

*Հիմնական Երևանում մնալու են:*

**Շատերը**

Կառավարիչ Համազասպ Մալազյանը 50-նն անց փորձառու բանկային կառավարիչ էր: Չնայած տարիքին՝ դեռ չէր ճաղատանում, իսկ կողքի ու հետևի մազերը համաչափ սպիտակել էին՝ Մալազյանին նմանացնելով հին մաֆիոզ կինոների հերոսի: Մալազյանի աչքերը միշտ գնահատման ու դետալների որսման գործընթացում էին: Ոչ մի մանրուք բաց չէին թողնում: Իսկ երբ նա նայում էր աշխատողներից մեկի վրա երկար ու սևեռում հայացքով, նենց տպավորություն էր, որ ինչ-որ ուժով մտնում ա գանգի մեջ ու կարդում ա, հենց էն մտքերը, որ դիմացինը փորձում ա թաքցնել:

Կարևոր հանդիպումների ժամանակ նրա բերանի մեջ միշտ կար սիգար: Հենց այդպիսի տեսարան էլ գտավ Վիլոն, երբ ժամը 5-ին մտավ 7-րդ հարկ:

Դուռը զգույշ թակելուց ու «մտեք» լսելուց հետո Վիլոն հայտնվեց մեծ կաբինետում: Ամբողջ բանկի միակ կաբինետում, ուր թույլատրված էր ծխի հոտը:

Մի քանի վայրկյան լուռ էր: Մալազյանը ռենտգենային հայացքով, աչքերը կոծկելով նայում էր ոչ այդքան ինքնավստահ Վիլոյին:

– Նստի, Վիլեն: Սուրճ կխմես?– բավական ջերմ սկսեց ղեկավարը:

– Ոչ, մերսի: Նոր եմ խմել: Ինչ-ոչ բան ա պատահել, պարոն Մալազյան? - պատասխաններ փնտրող ժպիտով հարցրեց Վիլոն:

– Չէ, դեռ բան չի պատահել: Բայց պատահելու ա հաջորդ շաբաթ,– շեֆի դեմքին խորամանկ ժպիտ էր, որը ասոցիացվում էր ավելի շատ լավ լուրի հետ, քան վատ: Բայց Մալազյանը չէր շտապում միանգամից ասել:– Քանի տարեկան ես, Վիլեն?

– Մյուս շաբաթվանից 28,– Վիլոն համարյա վստահ էր, որ Մալազյանը ինչ-որ բարեկամի կամ գուցե իր աղջկա հետ էր ուզում ծանոթացնել` լուրջ նպատակներով:

– Վիլեն, դու լավ ես աշխատել վերջին տարում: Մեր գործընկերները գոհ են: Բոլորն ասում են` դու համ լավ մասնագետ ես, համ էլ կարգին հումորի զգացում ունես: Լավ, չեմ ուզում երկարացնել` հաջորդ շաբաթվանից դու դառնում ես ձեր բաժնի ղեկավարը: Էս քո հրամանն ա:

## Գլուխ 12

*«Ստրասբուրգում իմ ելույթից հետո քանի հոգի գոռացել են» «բրավո, Գեղամյան»:*

### **Պատահական անցորդ**

Տիկոյի գործը ամենաձանձրալին էր: Տիկոն հաշվապահ էր արտգործնախարարության բաժնիներից մեկում: Նրա երիտասարդ, բայց փորձառու աչքի տակով էին անցնում հայ դիվանագետների և դիվանագիտական հարթության մեջ պատահական հայտնված ծանոթ/բարեկամների ծախսերը, որոնք փակում էին Տիկոյի նման սովորական հարկատուները: Տիկոն համարում էր, որ արտագնա այցելությունների և միջպետական հանդիպումների բավական լուրջ, եթե ոչ մեծ մասը ավելի շատ նման էին *տուրիստական* յուրահատուկ գործակալության ժանրին: Տիկոն բնականաբար դեմ չէր, որ հայ դեսպանները պաշտպանեն Հայաստանի շահերը ՄԱԿ-ում, բայց չէր հասկանում, թե ինչու պետք ասանական ծախսվեն հազարավոր դոլարներ, մեր հազարավոր դոլարները, օրինակ Շվեյցարիայում գոյություն գրեթե չունեցող հայ համայնքի մեջ տիկնիկային թատրոն կազմակերպելու վրա: Միևնույն ժամանակ հազարավոր հայաստանցի երեխաներ ոչ միայն տիկնիկներ չունեին, այլև սնունդ: Տնտեսության երկնիշ տարեկան հրաշքը երկի ամենաքիչը տպավորում էր հենց կիսակուշտ երեխաներին: Բայց դա էական չէր՝ նրանք միևնույն անտրեյու իրավունք չունեն:

Տիկոն իհարկե ուրախանում էր նաև, որ օրինակ Հնդկաստանում հայ դիվանագիտական մտքի և հարկատուների

հազարավոր վճարումների շնորհիվ մեզ տասնամյակը մեկ ՅՆԴկաստանի կառավարությունը որոշում ա նվիրել փոխի: Բայց այնուամենայնիվ, կարծում էր, որ ինչ-որ բան էն չի:

ԱԳՆ-ում մեծ ժամանակներ էին՝ ստեղծվում էր Սփյուռքի նախարարություն: Տիգրանը փորձում էր հասկանալ, թե ինչով է այն զբաղվելու, քանի որ հնարավոր էր փոխանցվել այնտեղ աշխատելու, սակայն դա էտքան հեշտ չէր: Բոլորի մոտ նոր նախարարությունը ասոցիացվում էր մի քանի հավերժ թեմաների հետ՝ համախմբում (ինչ-որ ձև), օգնություն Չայաստանին, ցեղասպանության ճանաչում: Բայց կոնկրետ ինչով պետք ա զբաղվեր նախարարությունը Տիկոն չէր կարողանում պարզեր, մինչև մի անգամ չլսեց ապագա *Նախարարուհու* ելույթը, որտեղ տրվում էր հստակ հանձնարարական աշխատողներին առաջարկել հստակ մտքեր, թե ինչով պետք ա զբաղվի նախարարությունը: Տիկոն հասկացավ, որ մեծապաթոս անվան տակ, առայժմ հստակ բովանդակություն չկա, բայց կան բավական հստակ ծախսեր: Բնականաբար ծախսերը մեծահոգաբար կհոգան Չայաստանի քաղաքացիները:

Չամենայն հավանականությամբ Տիգրանը ամենաշահագրգռվածն էր ընկերների հետ հաճախ հանդիպելու մեջ: Նա ուներ ցրվելու մեծ պահանջ: Տիգրանը հաճախ ունենում էր ընկերուհիներ, որոնց Մովսեսը պիտակավորում էր, որպես «ժամանակի ոչ նպատակային ծախս»: Նա սովորաբար մեկից երեք ամիս էր հանդիպում աղջկա հետ, հետո հասկանում, որ ինչ-որ բան դուր չի գալի կամ էլ դա հասկանում էր աղջիկը ու վերջ՝ բոլորն ապրում էին երկար ու երջանիկ, բայց առանձին:

Ուրբաթ օրը Տիկոն ուներ մեկ հիմնական խնդիր ու դա Սփյուռքի հետ կապ չուներ՝ նա պետք ա գտներ հարմար ստրիպտիզ ակունք Վիլոյի ծնունդի համար:

Գործից Տիկոն միանգամից շարժվեց դեպի Պռոշյան: Նախօրոք մի քանի տեղ էր ճշտել իրենց բաժնի ինչ-որ ավագ մասնագետ Ռազմիկից, որի բուն ֆունկցիաները նախարարությունում ոչ մեկ չէր հասկանում, բայց բոլորը միշտ տեսնում էին շտապելիս: Ռազմիկը միշտ գիտեր, որտեղ ինչ համերգ, փառատոն կամ այլ միջոցառում կա: Գիտեր բոլոր մաքուր և կեղտոտ օբյեկտները ու գները: Նա նույնիսկ գիտեր, որ *կաֆեներում* են զարեջուրը բերում ոչ թե կես լիտրանոց շշերով, այլ ղզիկ 0.33: Վերջին հանգամանքը նա միշտ կարևորում էր նկատելով, որ « դա շատ *ձիշովի* ձև ա մի քանի դրամ խնայելու...»: Կոմպետենտ էր նա նաև ստրիպտիզի բնագավառում, ինչը շատ օգնեց Տիկոյին: Տիկոն գիտեր միայն մեկ ակունք, որտեղ աշխատում էին ուկրաինուհի մասնագետներ և որտեղ նա մի քանի անգամ սիրահարվեց 20 թույնավա ընթացքում արագ փոխվող արհեստագետների վրա:

Մի քանի ակունք մտնելուց հետո Տիկոն հասկացավ, որ միայն տարածքի ուսումնասիրությամբ լուրջ տարբերություններ չի գտնի նրանց միջև:

– Կներեք, դուք ստեղ... մենեջերն էք?– Պռոշյանի վերջերում մոլորված ակունքներից մեկում հարցրեց Տիկոն *սուտիմյոռի* տեսքով բեղավոր մարդու:

– Ասա, ինչով կարող եմք օգնել?– պատասխանեց ակունքի տերը:

– Ընկերոջ ծնունդ կա պլաններում... հարմար ակունք եմք ման գալի... ուզում եմք օրիգինալ լինի մի քիչ:– Դիմացիների կռահունակության վրա հույս դնող ժպիտով ասեց Տիկոն:

– Իմ ախպեր, ուրեմն, նայի,– «իմ» բառի վրա գռեհիկ շեշտ դնելով սկսեց շոուփզնեսի գայլը,– էս ակումբը դու կարաս նեցն հարմարացնես ձեր ընկերոջ պահանջարկներին, որ իրա ծնունդը մի ուրիշ ձև հաճելի անցնի: Մեր աղջիկներն էլ են բարեհամբույր, մենք էլ մեր կողմից վիզ կդնենք, որ ձեր ախպոր որևիցե հաճույք լինի իրա ուզած ու կարգին ձևերով:

Տիկոն մի քանի վայրկյան մարսեց բարդ ստորադասական նախադասության անսպասելի ելևէջները ու շարունակեց:

– Իսկ կարելի ա... տենալ... ով ա դա... այսինքն ձեր պարուհիներին:– Ռազմիկն ասել էր, որ տենց կարելի ա անել, ու նույնիսկ կարևոր ա: Պետք ա զգույշ լինել, որ ստրիպտիզի ու կրկեսի սահմանները հստակ զատվեն հայաստանյան պարային անձնակազմով համալրված ակումբներում:

– Հիմա մի քիչ խնդիր ա... այսինքն մի թոպե: Իմիջայլոց անունս Ռոբերտ ա, իմ ախպեր;

– Տիգրան:

– Հեսա կգամ, Տիգրան ջան,– ու կորավ հավանաբար խոհանոց տանող ուղղությամբ:

Մի քանի թոպեից նա հայտնվեց բավական լավիկ մի կնոջ հետ: Տիգրանը տպավորված էր վերջինիս բոյով` այդքան բոյով ու բուսաթով պարուհի դեռ չէր տեսել: Մի քանի վայրկյան անհարմար հայացքներով փոխանակվելուց ու «շատ ուրախ եմ»-ների փոխանակվելուց հետո Տիգրանը լիովին հայտնվեց պարուհու խարիզմայի ազդեցության ներքո: Վիլոյի ծննդյան օրվա անցկացման վայրի ճակատագիրը կնքված էր:

## Գլուխ 13

*«Մենք պետք է ստեղծենք ոստիկանի այնպիսի իմիջ, որ ժողովուրդը սկսի մեզ հարգել»:*

**Ալիկ Սարգսյան,  
ոստիկանապետ**

«8-ին Ջազվեի մոտ» տեքստով *սմս*-ը բոլորն էլ ստացել էին ու ամենաշուտը եկել էր Մոսոն՝ *սմս*-ի հեղինակը: Նա որոշեց դուրսը չսպասել ընկերներին ու մտավ, զբաղեցրեց հարմար սեղան: Մոսոն յուրաքանչյուր հանրային վայրում միշտ հանդիպում էր միջինում 3-4 ժանոթ, գործընկեր, *ըն-գեր-տղա*, հոգեհարազատ մարդ, մոտիկ տղա կամ լավ ախպոր հարմար ընկեր: Հայ *մոդեռն* իրականությունը ուներ միջտղարմարդկային հարաբերությունների հարցերում կարգավիճակների անվանումների շռայլ փաթեթ: Մովսեսը, որը ուներ կապեր տարբեր բնագավառներում, գիտեր յուրաքանչյուրի հետ շփման առանձնահատկություններն ու վարժ տիրապետում էր նույնիսկ ամենաստվերային օղակների տերմինաբանությանն ու սովորույթներին: Մի քանի հոգու հետ երկու բառ փոխանակվելուց հետո, նստեց իր ընտրած սեղանին ու սկսեց ծխել: Հաջորդ օրը ուներ կարևոր միջոցառում՝ պետք ա խոսեր հակակոռուպցիոն ֆորումի ընթացքում հասարակության կազմակերպությունների դերի մասին:

Տասը թուպեից Արմենն ու Տիկոն նստած էին Մովսեսի կողքը: Տիկոն դեռ ծանր էր շնչում՝ ոտով էր եկել:

– Դե ինչ? Գտար կարգին տեղ? - հարցրեց Արմենը: Մոտոն դեռ ինչ-որ մտքեր էր գրում թղթի վրա մյուս օրվա ճաշի համար:

– Հա, կարգին տեղ մի հատ կար: Արդեն պայմանավորվել եմ: Գնի մեջ մտնում եմք, իսկ ստրիպտիզորշան, մի հատ նենց ծիտ ա:

– Հայ ա? - Մովսեսը պոկեց աչքերը թղթից:

– Հա, վերջն ա: Տեղն էլ վատը չի՝ «Բուբզ» ա անունը:

– Աղջկա, թե ակումբի,– ծիծաղեց Արմենը:

– Աղջկա անունը չեմ հիշում... կարևոր չի: Մի խոսքով պայմանավորվել եմ, հավեսով կուտենք, կխմենք ու Վիլոյի համար մի քանի հատուկ պար կանի:

– Իսկ սեքս-մեքս?– Մովսեսը ահագին հոգնել էր քարտուղարուհու միապաղաղությունից:

– Դե չհարցրեցի... էտ տերը մի քիչ *անծիպածիչնի* գյադա էր... Դե կտենանք էլի:– Տիկոյի մտքով անցել էր էտ հարցը, բայց անհարմար էր զգացել հարցնի Ռոբերտին:

Վիլոն մտավ փայլող դեմքով: Արագ մոտեցավ սեղանին ու աղմկոտ պաչեց Մովսեսի ճակատը:

– Դու դեմք ես, ապե,– Վիլոն ուներ երկու լավ նորություն, բայց առաջնայինը այդ պահին Ալիսայի *ֆրոնտում* առաջընթացն էր:

Մյուսներին բարևելուց հետո նստեց ու շարունակեց երջանիկ ժպտալ: Բոլորը սպասում էին բացատրությունների: Պաուզան երկարեց ու Տիկոն առաջինը չդիմացավ:

– Դե խոսա, արա... ինչ ա եղել?

– Տղեք, մեր *մոզզ* Մոսոն էսօր մի քանի թոպեում բերանս մի քանի ֆլիրտային ֆռազ գցեց, որ Ալիսայի վրա փորձեմ: Դե ես, պարզա, ինքս իմ ֆռազերի *նաբորն* ունեմ, որը մինչև Ալիսան միշտ էֆեկտիվ աշխատում էր: Բայց Մոսոյի խորհուրդը, որը ուղղակի շաուրմա ուտելուց թռցրեց, բերեց

նրան, որ ես վաղը վեցին Ալիսային տանում եմ ժամոյի: Ասա,— Վիլոն նենց ուրախ էր, որ չէր նկատել կողքը կանգնած մատուցողին:

– Հա, բոլորին գարեջուր, մի հատ մեծ աման ֆիստաշկաներով ու ... սև իկոռա չունե՞ք?... լավ, դե ֆիստաշկան երեք աման բերեք: Իսկ պիվան հենց վերջանա, թարմացրեք: մերսի,— Վիլոն աժեռտաժի մեջ էր: Մոտենում էր մյուս մեծ նորության պահը:

Մատուցողը հեռացավ, բաց մնացին ընկերների զարմանքն ու ուրախությունը կամրջող հայացքները:

– Հա... տղեք, էսօր ես եմ սաղ փազվում: Ձեր ախպերը մյուս շաբաթվանից բաժնի վարիչ ա:– Վիլոյի վերջի հայտարարությունը նենց ուրախացրեց իրենց սեղանը, որը էնօցիայի ալիքը փոխանցվեց ողջ Ջազվեին և նույնիսկ վերադարձավ հետ մատուցողի՝ հանգստություն հայցող հայացքով:

Բնականաբար տենց առիթը պետք էր լվալ: Ընդ որում լվալ լավ: Միանգամից երկու մեծ հաջողություն լավ ընկերոջ մոտ:

Մովսեսը միանգամից ընդունեց մի քանի ռազմավարական որոշում՝ գարեջուրը փոխարինվեց լավ օղիով, իսկ ֆիստաշկան համալրվեց ձիթապտղով ու ջերկիով: Սեղանի անձնակազմի ուրախությունը ակնհայտորեն խոստանում էր լուրջ «չայեվոյ»-ներ մատուցողին, ինչը միանգամից հասկացավ մատուցողը ու արտացոլեց ժպիտի լայնացմամբ ու սպասարկման արագությամբ:

Մոտ մի ժամ տղեքը քննարկեցին Վիլոյի հաջողությունները: Կենացներով ու պաչերով համեմվեց կարիերային ու անձնական հաջողությունների դուետը: Հետո թեմաները դարձան ավելի բազմազան:

Մի քանի բաժակ ներս արած Տիկոն բլթացրեց.

– Լսի, բայց շատ լավն էր է, էտ ծիտը: Նենց բոյով էր, որ  
ես ինձ... Գուլիվերի փոքր տեսակը զգացի...

– Էտ ով??,- հարցրեց Վիլոն:

Տիկոն նայեց Վիլոյի ուղիղ աչքերի մեջ ու զգաց, որ  
բլթացրել ա: Ինչ արած, պետք էր անել էն ինչ միշտ օգնում  
էր՝ սլաքները ծռել Մոսոյի վրա:

– Մոսոն գիտի,- ընկերներից ներողություն խնդրող ձայ-  
նով պաս տվեց Տիկոն:

– Վիլո ջան: Տիկոն տեսել ա ինչ-որ աղջիկ ու էտ աղջիկը  
բոյով էր: Տիկոն դեռ էտ ազդեցության տակ ա: Իսկ հիմա,  
երբ մի քանի բաժակ խմել ա, բոյը ավելի մեծ ա թվում:  
Վերջ: Առաջարկում եմ Տիկոյի ասածներին լուրջ վերաբեր-  
վողներին սրանից հետո պատժել: Ով ա կողմ?,- Եզրափա-  
կեց Մովսեսը մտցնելով ժողովրդավարության տարր իրենց  
հարբած քառյակում:

Ձեռքեր բարձրացրեցին բոլորը ներառյալ արդեն ան-  
մեղսունակության աստիճանի մոտեցող Տիգրանը: Վիլոն  
մինչև վերջ չհասկացավ կատակի երանգները, բայց դա ոչ  
էլ էական էր արդեն՝ նա հանդիպելու էր Ալիսային և կառա-  
վարելու էր մեծ բաժին ՅԲՆ բանկում: Կյանքը կարելի ա  
ասել հաջողվել էր: Ի դեպ, հաշվի առնելով ընկերների հետ  
մոտիկությունը՝ բոլոր չորսի վիճակներն էր կարելի ա ասել  
լավացել:

Տիկոն գնաց զուգարան: Դատելով իր երեսի գույնի  
մգությունից ու քայլերի արագությունից՝ *բորշելու:*

Արմենը հիշեց օրվա ինչ-որ պահեր.

– Արա... նենց վատ եմ զգում, որ ստիպված եմ լինում  
կտրել ուսանողի: Բայց գոնե մի բան սովորեն նոր գան...  
Էսօր եկել էր մի հատ... Ֆրանսերենի բաժնում ա սովորում՝  
ֆրանսերեն խոսալ էտ երևույթը չգիտի...,- կիսվեց Արմենը:

Արմենը սիրում էր իր դասախոսական աշխատանքը չնայած համեմատաբար համեստ վարձատրության: Նրան օգնում էին կողմնակի թարգմանությունները:

– Ուղարկի իմ մոտ տենց դեպքերում,– կատակով ասեց Մոսոն,– *կակ ռաս* դեռ կոռուպցիայի ծրագիրս չի սկսվել... եթե վափշե սկսվի... նենց որ համ աղջիկը կկարողանա շարունակել ուսումը, համ էլ գայլերը կուշտ կլինեն... այսպես ասած:

– Նայի, Մոս: Մեկ-մեկ լինում ա, որ շատ ես ուզում դնես ասենք նույն երեքը... բայց էնքան բութ են լինում... նույնիսկ ոչ թե ուղղակի բութ այլ... հակահիգիենիկ բութ... լկստված շարժումներով ու մայկայի վրա գրություններով, որի իմաստը չեն էլ հասկանում... Սաղ կուրսում մենակ էտ աղջիկն ա տենց 3-րդ լիկվիդ մնացել... Հիմա եթե երկու շաբաթից չպատասխանի,– ջերկին ծամելով մի փոքր դադար տվեց բանասիրական գիտությունների թեկնածու Արմենը – պտի ուղարկեմ վերև... Հա, ամենաբոցը՝ եկել ա քննության, անունն են հարցնում՝ ասում ա՝ Անուլիկ: Բացել էր ինձ: Մի կերպ զսպեցի, որ չքանդվեմ: Պատկերացնում ես մարդ ներկայանա իրա անվան ամենափաղաքշական տարբերակով: Կարող ա ես են ու չեն ուզում իրան փաղաքշեմ,– Արմենը ծիծաղում էր:

– Հա, բոց ա,– Մովսեսին միշտ դուր էին գալիս Արմենի այլու պատմությունները կապված Բրյուսովի հետ:

Վիլոն կլանված 4-րդ *սմս*-ն էր գրում: Գործից դուրս գալուց նորից էր տեսել Ալիսային ու ամեն դեպքում վերցրել հեռախոսը, որ եթե ինչ-որ բան փոխվի՝ զանգի: Ինքը լավ գիտեր, որ ոչ մի բան չի փոխվելու: Ու հիմա 5-րդ բաժակից հետո գիտակցեց, որ ահավոր տեղին կլինի բարի գիշեր մաղթել այդ գեղեցիկ էակին: 4-րդ *սմս*-ը նկարագրում էր

բարիգիշերային մաղթանքի վերջին առանձնահատկությունը:

Մովսեսը սկսեց անկեղծանալ համեմատաբար գիտակցության մեջ գտնվող Արմենի հետ.

– Պտի խոսամ կոռուպցիայի դեմ պայքարի մասին: Ախպեր ջան, մի հատ խորացի. պտի ելույթ ունենամ էն մարդկանց մոտ, ովքեր պատրաստ են գրանտի համար տալ «ատկատներ», իրանց բյուջեների մեջ գրել մի թիվ, որի եքա տոկոս մտնում ա իրանց գրպան, ում համար կոռուպցիան դա բուկլետ ա, ուր գրած ա, որ դա վատ բան ա ու որը պետք ա բաժանել մի քանի հոգու, որ իրանք ստանան աշխատավարձ: Եթե վաղը Չինաստանը հայտարարի կոռուպցիայի խրախուսման դրամաշնորհի հայտարարություն, էտ նույն մարդիկ միանշանակ լուրջ դեմքերով կդիմեն դրան... հմմ... սպասի մի հատ էլ միտք եկավ,– ու Մոսոն ավելացրեց իր ճառի ևս մի քանի տարր, որ ընդգծում էին իր ՅԿ-ի անհանդուրժողականությունը կոռուպցիայի նկատմամբ:

Տիկոն դեռ զուգարանում էր: Վիլոն *սմս*-ների մեջ: Մոսոն գրում էր, իսկ Արմենը վերջացնում ֆիստաշկի ու *ջերկիի* մնացորդները:

## Գլուխ 14

*«Մեր նպատակն է Հայաստանը դարձնել արտակարգ իրավիճակների տարածաշրջանային առաջատար»:*

***Միեր Շահգեղյան,  
Արտակարգ իրավիճակների նախարար***

Վիլոյի էյֆորիայի մեջ կորել էր մի կարևոր հանգամանք: Մի կարևոր զուգադիպություն, որի մասին նրան պետք ա հուշեր մեկը, որից ամենաքիչը Վիլոն կուզենար լսել ինչ-որ ճիշտ բան...

– Յա Վիլո ջան, – Ջազվե մտավ Արսենը, մեքենայի բանալին ձեռը՝ հանկարծ մեկը չկասկածի, որ ինքը X5-ի հպարտ տերն ա:– Ստեղ ես? – Այ հենց սենց հանդիպումների պատճառով Վիլոն չէր սիրում տենց *գլամուռնի* տեղեր: Դրա համար իրա առաջարկությունները միշտ կապված էին աջարական խաչապուրիի մասնակցությամբ հասարակ տեղերի հետ՝ «տղավարի» տեղերի հետ:

– Հեյ, – ասեց Վիլոն առանձնապես չնայելով գործընկերոջ կողմը ու շարունակելով սմս-ի հերթական քլիքը:

– Լսի, ուզում եմ քսենոն դնեմ ֆառերիս, ինչ կասես էն մանուշակագույններից դնեմ, թե սովորական? – սկսեց X5-ի հպարտ տերը:

Վիլոն գիտեր, որ դրան պատասխան պետք չի, այլ ուղղակի մասնակցություն և ինչպես միշտ ինչ-որ աղմուկ արտասանեց, ինչը լրիվ բավարարեց Արսենի քսենոնաֆառային հետաքրքրասիրությունը:

– Լսի, շնորհավոր: Փաստորեն չմեռանք մեր ախպորը բաժնի վարիչ էլ տեսանք: *Մալադեց*, Վիլ: Ես լիքը ուրախ եմ:

Վիլոն մի փոքր սթափվեց: Նա չգիտեր, որ ուրիշները արդեն գիտեն իր առաջխաղացման մասին:

– Դու... որտեղից գիտես?...– հարցրեց Վիլոն զարմացած:

– Արդեն սաղ էլ գիտեն, ախպերս: Ինձ Ալիսան ասեց: Էն օգնականը սեքսոտ: Իմիջայլոց տեսա, ձեզ էսօր կոֆե խմելուց, աչկիս սկսել ես դուր գալ: Այսինքն բաժնի վարիչները, որ աղջկան չեն դուր գալի? –զգվելի ծիծաղալով ասեց Արսենը, որը հիմա ավելի քան երբեք իրեն համարում էր Վիլոնի ընկերը:

Վիլոն կիսատ թողեց *սմս*-ը ու միանգամից օյաղացավ ադրինալինի ազդեցության տակ: Արսենը արդեն նստել էր ուրիշ սեղանի մոտ իրա մյուս անձն ընկերների հետ: Վիլոն ցավալիորեն զգաց երկու ոգևորիչ իրադարձությունների հիասթափեցնող կապը. աշխատանքի առաջխաղացում – Ալիսայի վերաբերմունքի փոփոխություն: Էնքան ծակող զգացում էր մի քանի վայրկյան, որ Վիլոն չնկատեց, ոնց Տիկոն վերադարձավ, միանգամից ասեց հաջող ու դուրս եկավ կաֆեից:

Լավ, թեկուզ ասենք Ալիսան իմացել էր, բայց հո չէր իմացել Վիլոնի ու Մալադյանի խոսակցությունից առաջ... Իրանք սուրճ էին խմում ցերեկը, իսկ բարձրացման մասին Մալադյանը ասեց օրվա վերջում: Ով պտի բանկում տարածեր? Դժվար էր միանշանակ պնդել կեղծավորությունը, բայց կասկածը հերիք էր Վիլոնի տրամադրությունը զցելու համար: Օրը մոտենում էր ավարտին:

## Գլուխ 15

*«Ձեր հին ընկերը Դաշնակցությունն է»:  
Յին ընկեր*

Շաբաթ օրերը Մովսեսը միշտ չէր ետքան շուտ վեր կանում: Բայց սա սովորական շաբաթ օր չէր՝ հակակոռուպցիոն շաբաթ օր էր:

Մովսեսը զգույշ թրաշվեց, որ հանկարծ չքերօժի վիզը, ինչպես ամեն անգամ, երբ արագ պատրաստվում էր դուրս գալ: Հագավ սպիտակ վերնաշապիկը, սև կոստ ու ոսկեգույն զապիճիկը: Ստուգեց այցեքարտերը՝ մի 10 հատ կար, հերիք էր: Օրվա գերխնդիրը՝ լավ տպավորություն թողնել ու կապ հաստատել Թամարա Գեորգիևնայի հետ:

Օդիկոլոն, սանր, վերջի շտրիխները կոստյումի վրա, մի քանի ճզմած պզուկ ու Մովսես Ադամովիչը արդեն սեղմում էր Վեկտրայի գազը: Քոչարից մինչև Մարիոտ ճանապարհը պետք ա խլեր մի 20 րոպե միջին դժվարության երթևեկության պայմաններում: Մովսեսը դուրս էր եկել մեկ ժամ շուտ: Նա պատասխանատու մարդ էր: Իր նախկին կնոջ մեջ իրեն ամենաչղուրեկան գծերից էր դանդաղկոտությունը: Ամեն անգամ տեղ գնալիս Մոսոն ստիպված էր շտապեցնել կնոջը: Ու չնայած իրենց բաժանվելու պատճառը դա չէր, բայց այս պահին Մովսեսը մտածում էր դրա մասին:

Բաղրամյանով իջնելուց Նախագահականի մոտ Մովսեսը տեսավ բողոքի ցույց: Հավանաբար ընդդիմությունն էր: Հիշեց, որ մի քանի օրից ընդդիմության հանրահավաքն ա, հիշեց, որ դեռ մնացել ա մի քանի քաղբանտարկյալ ու հիշեց

որ 2 շաբաթից Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումն ա, որին, իր կարծիքով, Գյուլը չի մասնակցի:

Մովսեսը միանշանակ ընդդիմադիր էր: Այդ շրջանակներում ուներ շատ ընկերներ: Բայց չնայած ձայնը տվել էր հենց ընդդիմությանը, դա արել էր, որպես չարիքից փոքրագույնի ընտրություն: Նա չէր կարող լիաթոք գոռալ հրապարակում «Լևոն», որովհետև կհակասեր ինքն իր տաս տարի առաջվա «Լևոն, հեռացի» կոչերին: Հեռանալու կոչով նա սիրով կդիմեր ներկա իշխանություններին, եթե պատկերացներ ռեալ արդյունավետությունը: Ամենաշատը նա զգվում էր Բաղդասարյան-Գեղամյանական մակնիշի մի քանի անգամ ճամբար փոխած գործիչներից: Սակայն զգվելով տուն չես պահի: Տուն կպահես հակակոռուպցիոն այսօր հայտարարվելիք դրամաշնորհով, որի մասին հիշելով՝ Մովսեսը ավելի ուժեղ սեղմեց գազին:

Սայաթ-Նովայից Աբովյան թեքվելուց հետո Մովսեսը հասկացավ, որ իզուր չէր շուտ դուրս եկել տնից՝ խցանում էր: Մեքենաները դանդաղ իջնում էին Աբովյանով: Մովսեսը մի քանի ծանոթ տեսավ պատուհանից ու նույնիսկ հասցրեց իմանալ ոնց են-ոնց չեն: Աբովյանի ձախ կողմի վրա կայանված մեքենաներից մի քանի ժրաջան *գայիշիճիկ* իրակացնում էին օրենքի գերակայության հիմնական աստվածահաճո գործը՝ հանում էին մեքենաների համարները:

Խցանումը բավական անտեղի էր՝ հաշվի առնելով արձակուրդային օգոստոս ամիսը: Իրականում Երևան հյուրանոց ինչ-որ պատվիրակություն էր անշտապ մտնում ավտոբուսով, որը և ստեղծել էր սեպտեմբերյան իրավիճակ այդ փողոցի վրա:

Մովսեսը հանգիստ էր: Բան չմնաց: Մտքում կրկնում էր ճառը, իսկ բարձրաձայն շարունակում ողջունել անընդհատ հանդիպող ծանոթներին:

## Գլուխ 16

*«Այս հրապարակում կասկածող չկա:  
Այս հրապարակում դավաճան չկա: Այս  
հրապարակում Հայաստանի Հանրապե-  
տության հաղթական քաղաքացին է»:*

***Խմբագիրը***

Մարիոթի «Աշոտ Երկաթ» դահլիճում արդեն հավաքվել էր ֆուրչետասեր քաղաքացիական հասարակությունը: Գործադիր տնօրենների աչք շոյող խմբերը արդեն զրուցում էին միմյանց հետ ու կիսվում կոռուպցիայի հանդեպ իրենց տասնամյակներ տածած հակակրանքների առանձնահատկություններով:

Տոպրակագործների միության նախագահ Մանուկ Մնացականյանը՝ վարկատենչ Առնոլդ Մնացականյանի որդին, որը ղեկավարում էր միջին բիզնեսի պաշտպանության հիմնադրամը, կանգնած էր լուռ: Սպասում էր իր համեստ հակակոռուպցիոն ջանքերի առաջարկելու հնարավորությանը:

Մարիոթի դիմաց կայանման տեղ արդեն չկար: Ստիպված հին Վեկտորան կայանվեց Էյչ-Էս-Բի-Սի բանկի դիմաց՝ ուրախացած *պառկովչիկի* անիմաստ ուղղորդող ժեստերի ներքո:

Մովսեսը դուրս եկավ մեքենայից ու շարժվեց դեպի Մարիոթ՝ ճանապարհը կտրելով Վյենայի կաֆեի միջով: Միջոցառման սկզբին մնում էր 5 րոպե:

Սրահում շարված էր մեծ կլոր սեղան, որի շուրջ նստած էին 50-ից ավել մարդիկ, ոմանք ականջակալներով թարգմանության համար: Օրվա հերոս Խաղաղ հասարակության ինստիտուտի տնօրեն Թամարա Միլիտոսյան Գեորգիևնան արդեն նստած էր ներկայացնողների սեղանին և վերջին հայացքով հաշվում էր մասնակիցներին, փնտրում ծանոթ դեմքեր, ստուգում ՁԼՄ-ների քանակը:

Մովսեսը արագ վերցրեց իր *բեջ* կոչեցյալը ու ճեղքեց սեղանի ձախ կողմի նստարաններից մեկի վրա:

Հանդիպումը *այլևս* սկսված էր:

Ստանդարտ ողջույններից հետո, ԽՀԻ-ն ներկայացրեց դրամաշնորհային ծրագիրը, որը նախատեսում էր 100 հազար դոլարի հատկացում՝ երկարացման հնարավորությամբ:

Ներկայացնելուց հետո հերթը հասավ հարցերին ու Մովսեսը օգտագործեց իր՝ հակակոռուպցիոն լումա ներդնելու առիթը:

– Իսրայելյան Մովսես, ժողովրդավարական երիտասարդական հասարակական ակումբների դաշինք: Մեր կազմակերպությունը զբաղվում է քաղաքացիական հասարակության դաշտի ամրապնդմամբ և ժողովրդավարության ծրագրերով, որոնց առանցքում օրենքի գերակայության ամրապնդումն է և կոռուպցիայի նվազեցումը: Մեր կառույցի կարծիքով,– նա սիրում էր «կառույց» անվանել իր ՀԿ-ն, որի անձնակազմը հանգիստ տեղավորվում էր իր Վեկտրայի մեջ,– խոսքը պետք է գնա ոչ թե այդքան կոռուպցիայի նվազեցման կամ հետևանքների վերլուծության մասին, որքան բուն կոռուպցիայի դրսևորման հնարավորությունների կանխման: Բնականաբար այսօրվա նախաձեռնությունը ավելի քան ողջունելի է և հայտարարվող դրամաշնորհին չի

բացառում դիմել նաև մեր կառույցը, բայց գտնում եմ, որ կարիք կա հստակեցնելու այն առաջնահերթությունները, որոնցով կառաջնորդվի ոչ միայն ծրագիրը իրականացնող կազմակերպությունը, այլև ողջ ՀԿ համայնքը: Ձևավորենք որոշակի կոալիցիոն մոտեցում մոտակա տարիների հակակոռուպցիոն գործողությունների համար, ինչը անկախ ամեն ինչից կբարձրացնի ողջ դաշտի աշխատանքի արդյունավետությունը:

Մովսեսը խոսում էր վստահ, համաչափ ու վստահություններ չնչող ձայնով, իսկ խոսքի բովանդակությունը արդեն ավտոպիլոտի վրա էր դրված և մի քանի տերմինների փոփոխությամբ կրկնում էր այն, ինչ նա ասում էր վերջին 8 տարիների ընթացքում: Հատուկ այս հանդիպման համար Մովսեսը նայել էր մի քանի կայք ու գտել, որ կոռուպցիան ավելի լավ ա «կանխել, քան պայքարել հետևանքների դեմ»: Այդ դետալի շնորհիվ նա ներկայանում էր որպես այդ բնագավառի օրվա ասպետը:

Իրականում Մովսեսը վաղուց հոգնել էր ՀԿ խաղերից և հաճույքով կգբաղվեր ավելի հանգիստ ու իմաստավորված գործով: Բայց դրա համար պետք էր սպասել, որ Հայաստանը դառնա հանգիստ ու իմաստավորված երկիր... անցումային ժամանակներ էին Հայաստանում: Ժամանակներ, որոնք ստեղծում էին անհասկանալի մութ անցքեր հասարակության և բիզնեսի արանքում, որոնք լցնում էին ՀԿ-ները իրենց վճարովի ժողվրդավարասեր ծրագրերով:

Մովսեսը խոսեց ամենաերկարը, որից հետո խոսեց մի կին Վանաձորից: Այդ կինը բավական անհասկանալի, բայց հուզիչ մտքեր էր արտահայտում, որոնց հիմքում տեղեկատվության տարածման, իրազեկության բարձրացման, քաղաքացիների կրթության գաղափարներն էին: Գաղափարներ, որոնք ոչ միայն ծեծված ու բռնաբարված էին ՀԿ դաշ-

տում, այլև ակնհայտորեն տանում էին դեպի անխնա փողերի վատնում՝ բուկլետներ: Կնոջ խոսքը խորտակվեց մասնակիցների անհանդուրժող փսփսոցների մեջ, որոնք ձանձրույթից խոսում էին Աբխազիայի ճանաչման, ֆուտբոլի և ընդդիմության գալիք ցույցի մասին՝ երբեմն ոչ պլատոնական հայացքներ նետելով կողքի սենյակում հանգրվանած ֆուրշետի վրա:

Ծրագրի պրեզենտացիայից հետո կոռուպցիատյաց ազգաբնակչությունը վստահ չարժվեց դեպի սուրճն ու սենդվիչները: ԽՅԻ-ի ֆուրշետները միշտ առանձնանում էին շռայլությամբ: Դրանք քաղաքացիական հասարակության կառուցման անբաժանելի մասն էին, առանց որի դժվար կլիներ լուրջ մասնակցություն ապահովել մեծ միջոցառումներին: Նույնիսկ ժողովրդավարության առավել ժիր մարտիկները կարող էին լքել իրենց դիրքերը, եթե հեռանկարում չլիներ հայաստանյան ՅԿ-ական ժողովրդավարության հիմնական շարժիցներից մեկը՝ ֆուրշետը:

Մովսեսը երկու գդալ շաքար լցրեց սուրճի մեջ ու կանգնեց անկյուններից մեկում: Նրա մի քանի ծանոթներ արդեն նշմարել և մոտենում էին:

– Մովսես ջան, ողջոյն: Ոնց ես? - Անահիտը անցած տարի Մովսեսի «կառույցի» հետ հաջող դրամաշնորհային ծրագիր էր արել խուլ ու համր երեխաների շրջանում ընտրական կրթության իրականացման գծով: Անահիտը ևս հին մարդ էր այդ դաշտում: Չունեն ավելորդ *իլյուզիաներ* և առանց հուզմունքի խաղում էր խաղի կանոններով:– Ոնց որ լավ «ինտերնետ ռեսերչ» էիր արել, հա կոռուպցիան, այ տղա? Լավ էլ կոռուպցիայի գելի տպավորությունն թողեցիր,– ժպտալով խոսում էր Անահիտը, երբ մոտեցավ ակնոցներով միջին երիտասարդ տարիքի անծանոթ մարդ:

– Բարև ձեզ, Մովսես: Իմ անունը Ռուբեն է,– այցեքարտը մեկնելով, ասեց տարօրինակ մարդը,– ես ուզում էի ասել, որ միանշանակ աջակցում եմ կոալիցիոն մոտեցումը կոռուպցիայի կանխարգելման հարցում: Լավ կլիներ հանդիպելիք մոտակա օրերին, մի փոքր մանրամասն քննարկելիք այս ծրագրերը, գուցե ընդհանուր մոտեցումներ մշակելիք այս հարցում:

Մովսեսը նայեց ծիծաղը զսպող Անահիտին: Տարօրինակ մարդը ակնհայտ նորեկ էր ՀԿ դաշտում ու լուրջ էր ընդունում լուրջ դեմքերով պրեզենտացիաներ անող փորձագետներին, կազմակերպությունների տնօրեններին, հիմնադրամների համակարգողներին, ինչպես նաև «հոգաբարձուների խորհուրդ» ֆռազը:

Մովսեսը որոշեց մի փոքր խաղալ մարդու հետ.

– Այո, միանշանակ հանդիպենք: Մեր կառույցը միշտ կարևորել է ՀԿ-ների ջանքերի համադրումը քաղաքացիական հասարակության կառուցման յուրաքանչյուր հարցում: Իսկ քանի անգամ ունի ձեր... – Մովսեսը կարդաց այցեքարտը,– Քաղաքացիական գիտակցության հիմնադրամը?

Մովսեսը տվեց հարց, որը չէր սիրում ոչ մի ՀԿ ղեկավար: Այդ հարցը շատ անգամ էր օգնել Մովսեսին ցրել անցանկալի գրուցակցին և այս անգամ կարծես բացառություն չէր սպասվում:

– Ըրը... Մենք համեմատաբար նոր կազմակերպություն ենք, բայց մեր շահառուները բոլոր այն մարդիկ են, որոնք պոտենցիալ կոռուպցիայի զոհ կարող են դառնալ: Դա քիչ թիվ չի,– «շահառուների» մասին սիրում էին խոսել ՀԿ-ականները, քանի որ դրանք փոխարինում էին անդամների պակասը: Կարելի էր ասել՝ մեր շահառուները ՀՀ քաղաքացիներն են և փաստորեն դառնալ 3 միլիոն մարդկանց ՀԿ կնքահայրը, ինչը և անում էին շատերը:

– Ես անպայման ձեզ կզանգեմ,– լուրջ դեմքի արտահայտությամբ ասեց Մովսեսը՝ դնելով նոր ընկերոջ այցեքարտը գրպան:

Ընդհանրապես տեսականորեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է որ ներկայացնեն հասարակության խնդիրները տարբեր մակարդակներում և փորձեն ազդել «որոշում ընդունողների» վրա: ՀԿ-ները պետք ա ներկայացնեին հասարակության լուրջ զանգվածների շահեր և ստեղծվեին ելնելով կոնկրետ խնդիրներից՝ դրանք լուծելու շուրջ համախմբելով քաղաքացիներին: Վարդագույն քաղաքում խնդիրները ոչ թե ծնվում էին քաղաքացիների մեջ, այլ հայտարարվում էին միջազգային դոնորների կողմից: Կարող էր հայտարարվել, որ Հայաստանում կա ցածր իրազեկություն երթևեկության կանոնների կամ էկզոտիկ ծաղիկների վերաբերյալ և ՀԿ-ները կսկսեին կրթել ժողովրդին այդ թեմաների շուրջ: Այժմ որոշվել էր, որ հայերը բավարար չափով չեն զգվում կոռուպցիայից և ԽՀԻ-ի միջոցով հայտարարվեց «հակակոռուպցիոն ծրագրի» մրցույթ:

Մովսեսը արագ հայացքով փնտրում էր Թամարա Գեորգիևնային: Նա ուզում էր մի քանի բառ փոխանակվել: ԽՀԻ-ն միակ *դոնոր* կազմակերպությունն էր, որից Մովսեսը առայժմ դրամաշնորհ չէր «կայցրել»: Հիմնականում այն պատճառով, որ այն ուներ իր հիմնական «կլիենտ» ՀԿ-ներին, ում միջոցով իրականացնում էր թե փողերի ստանդարտ լվացումը, թե վերադասներին ցույց տրվող «արդյունքները» հանձնիս տեղեկատվական գրքույկի վրա պատկերված գոհ քաղաքացիների: Բոլորը գիտեին, որ Ինստիտուտը ստանում է ֆիքսված «օտկատներ» մի քանի ՀԿ-ներ

րից և այդ ՅԿ-ները սովորաբար հաղթում էին բոլոր հայտարարվող մրցույթները: Սակայն այս նոր հայտարարությունը մի քիչ տարբերվում էր մյուսներից իր չափսով և ուղղվածությամբ՝ ստեղծելով նոր ուժեր փնտրելու գրեթե համոզիչ տպավորություն: Մովսեսը ուզում էր գտնել ընդհանուր լեզու Թամարայի հետ և համոզել, որ կարող է լինել օգտակար խաղացող ԽՅԻ-ի փակ ակումբում: Դա հեշտ չէր:

Մի քանի թույլից Մովսեսը գտավ Գեորգիևնային ու փորձեց ջերմ գրույց վարել՝ հարցնելով ընդհանրապես Ինստիտուտի նորություններից, առաջընթացից, գովելով մի քանի ծրագիր, որոնց մասին լսել էր ընկերներից և այլն: Թամարայի դեմքի արտահայտությունը չէր զիջում Մովսեսի ՅԿ-ական հմայքի ազդեցության տակ:

– Դուք նախկինում դիմել եք մեր հայտարարություններին, պարոն Իսրայելյան? – Մովսեսին հարցրեց նա:

– Ոչ, մենք իրականացրել ենք մի քանի ծրագիր ձեր մյուս կապալառուների հետ, բայց դեռ առիթ չէր եղել անմիջականորեն ձեր ծրագրերի վրա աշխատել:– Դե չէր կարող Մոսոն ասել, որ ախր բոլորը գիտեն, որ իրենց հայտարարությունները կոնկրետ և նախօրոք որոշված ՅԿ-ների համար են և դիմելու իմաստ չկա: Իսկ մրցակցության շղարշ են ստեղծում «Քաղքացիական գիտակցության հիմնադրամների» տիպի միամիտ կազմակերպությունները:– Բայց ես կարծում եմ, ավելի շուտ վստահ եմ, որ այս նոր ծրագիրը միանշանակ կարող է օգտակար համագործակցության առիթ դառնալ մեզ համար, տիկին Միլիտոսյան,– ուղիղ Գեորգիևնայի աչքերի մեջ բազմիմաստ նայելով՝ ասեց Մոսոն:– Առաջարկում եմ հանդիպել մոտակա օրերին առավել լավ իրար հասկանալու ու ծանոթանալու համար: Վստահ եմ, դա երկուսիս էլ օգտակար կլինի:

– Պարոն Իսրայելյան, ես ձեզ հետ կփորձեմ կապվել հաջորդ շաբաթ: Կարծում եմ ամեն դեպքում հաճելի էր ծանոթանալ,– ականհայտորեն ցրեց Գեորգիևնան:– Իսկ քանի անդամ ունի ձեր կազմակերպությունը,– վերահսկիչ կրակոցը կատարեց դաժան տիկինը: Գեորգիևնան Մովսեսից ոչ պակաս գիտեր ՅԿ-ների թույլ կողմերը:

– 70-ից ավել, հիմնականում երիտասարդներ և ուսանողներ, բայց մեր շահառուները...– Մոսոն կանգնեց Գեորգիևնայի շնածուկ ժպիտի տակ... Սոտավորապես այդպես էլ ավարտվեց նրանց խոսակցությունը:

Անահիտը, որը այդ ընթացքում լսում էր խոսակցությունը, կողքից մոտեցավ, որ մի քիչ սփոփի Մոսոյին:

– Լավ, դիրխոր ընկնել պետք չի, Մոս: Նորից ՄԱԿ կդիմես էլի:

– Չէ, ես պտի սրա պոչը մի տեղից գոնե բռնեմ,– ասեց Մովսեսը ու հրաժեշտ տալով Անահիտին՝ շարժվեց դեպի դուրս:

## Գլուխ 17

*«Նենց օփշի էտքան էլ վատ չանցան ընտրությունները»:*

*Եվրոպական դիտորդներ*

Արմենը միակ ամուսնացած ընկերն էր և ի տարբերություն Մոսոյի՝ բաժանված չէր: Նրա կինը՝ Ինգան, իր նախկին ուսանողուհին էր, որի հետ նա բավական երկար ժամանակ հանդիպում էր, իսկ ավարտելուց հետո միանգամից ամուսնացավ: Նորմալ կարգին ընտանիք էր, նույնիսկ սերով: Երեխեք առայժմ չէին նախատեսում՝ սպասում էին *ռեմոնտի* ավարտին և ուղղակի մի քիչ միասին կյանքից մաքսիմալը քաղելուն:

Արմենը առավոտը գնում էր համալսարան, որը սովորության համաձայն դեռ «ինստիտուտ» էր կոչում, հետո տանը պարապում էր աշակերտների հետ (այդ գործը հեչ չէր սիրում, բայց եկամտի հիմնական աղբյուրն էր), իսկ ժամանակ առ ժամանակ անում էր տանը թարգմանություններ: Հիմնականում Մովսեսի ՀԿ-ական ծրագրային թարգմանությունները «աուտսորսինգ» էր արվում Արմենին:

Այդ շաբաթ օրը պետք ա գնային Ինգայի ծնողների մոտ ուտուշ-խմուշի և ուղղակի շփվելու, ինչը Արմենը անում էր առանց մեծ հավեսի ու չէր թաքցնում դա:

– Իսկ քանիսին ենք հետ գալու?, – զոքանչի հանդիպումի ակնկալիքներից թթվող դեմքով հարցրեց նա:

– Էէէ. Արմ, դե կնստենք կտենանք էլի: Հո չեն ուտելու քեզ: Կխոսաք, կարաս մի հատ էլ նարդի գցես պապայիս հետ: Մի ամիս ա չենք եղել մերոնց մոտ, տենց չի լինի...

Իրոք, մի ամիս չէին եղել Ինգայենց ծնողների մոտ, բայց դա մեծ տրավմաներ չէր առաջացրել Արմենի ամուր հոգում: Ամեն դեպքում դիմադրելը անիմաստ էր և Արմենը անշտապ պատրաստվում էր: Նա մերվել էր այն մտքի հետ, որ մի ժամից հարգանքի տուրքն է մատուցելու կնոջ ծնողներին:

Ձանգեց հեռախոսը: Տաքսին արդեն ներքևում էր: Պետք էր Իջնել: Բնականաբար Ինգան դեռ պատրաստ չէր՝ վերջին հարդարանքներն էր անում հայելու առաջ, որոնք էտքան ներվայնացնում էին Արմենին, որովհետև միշտ վերջին ռուպեներին էին արվում:

Արմենը առաջինը իջավ, նստեց տաքսի և սկսեց սպասել կնոջը, երբ հանկարծ բջջայինի վրա եկավ զանգ անծանոթ համարից, որը պետք ա փոխեր Արմենի շաբաթ օրվա կյանքը դեպի լավը:

– Ալո, բարև ձեզ: Ես խոսում եմ Մելիքսեթյան Արմենի հետ?,- հնչեց կնոջ վստահ ձայն:

– Այո, լսում եմ ձեզ:

– Ես ունեմ բավական կարևոր խոսակցություն ձեր հետ և կուզենայի այսօր հանդիպել և զրուցել, եթե հնարավոր է:

– Ինչի... ինչի հետ ա կապված,- Արմենը ահագին զարմացավ:

– Կապված համալսարանի հետ: Գիշտն ասած, չէի ուզե՜նա հեռախոսով: Կարող եմք ժամը երեքին հանդիպել Միմինոյում?

Արմենը չէր հասկանում ինչ ա կատարվում, բայց նրան միանշանակ դուր էր գալիս Ինգայի ծնողների տնից շուտ պոկվելու միստիկ առիթի հեռանկարը:

– Շատ լավ: Կգամ: Որևէ լուրջ խնդիր է, թե...

– Ոչ, ոչ, պարզապես չէի ուզե՜նա խոսել հեռախոսով,- եզրափակեց կինը: Երկուսն էլ ասեցին *առայժմ* և վերադարձան իրենց գործերին:

Ինգան իջավ ինչ-որ տոպրակներով: Նստեց հետևի նստարանին ու մեքենան պոկվեց:

– Որ խնդրեմ մի ծխեք էլի,– ասեց Ինգան զարմացած վարորդին:

Վարորդը դեմ գցեց սիգարետը և շարունակեց քշել՝ մի քիչ ավելի արագ:

Ճանապարհին Արմենը պատմեց միստիկ զանգի մասին ու բացատրեց, որ ստիպված ա գնալ հանդիպմանը: Ինգան կիսակասկածող հայացքով լսեց ամուսնուն: Նա հասկանում էր, որ ամեն ինչ արդեն որոշված ա ու Արմենը ամեն դեպքում գնալու ա այնտեղ 3-ին: Համակերպվելով այդ մտքի հետ՝ նա ամեն դեպքում մունաթոտ բողոքեց, որ ամուսինը քիչ ա շփվում իր ծնողների հետ:

## Գլուխ 18

«ԳՐՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՌՈՒՐ»:

*Արդույա Գյուլ*

Ժամը երեքին Միմինոյի ներսի սեղաններից մեկում հարմար տեղավորվել էր 40-նն անց մի կին, որի բավական ինքնավստահ տեսքի մեջ այնուամենայնիվ կար ինչ-որ անհանգստության միտում: Մատուցողը արդեն մի անգամ մոտեցել և չոր հետ էր ուղարկվել մինչև մյուս հյուրի ժամանումը: Եղանակը շոգ, ամառային, ջրաշխարհային էր, սակայն փչում էր այն, ինչ բոլոր 5-րդ դասարանցիների շարադրություններում կոչվում է «մեղմ հովիկ»:

Ռեստորան մտավ փնտրող հայացքով Արմենը ու մի քանի րոպեից գտավ Ինգայի ծնողների հյուրասեր ճանկերից իրեն փրկած տիկնոջը: Կինը վեր կացավ ներկայացավ և ջերմ բարևեց: Երկուսը նստեցին և կինը առաջարկեց պատվիրել իներեթական խաչապուրի, որը «ստեղ շատ համով են սարքում»:

– Լավ, լինեն անկեղծ,— սկսեց կինը,— իմ հարցը կապված ա ձեր համալսարանի հետ... իմ աղջիկը... ինքը 2-րդ լիկվիդն ա ընկել ու դա մեծ խնդիր ա ինձ համար: Ես կուզենայի իմանալ... իր թերությունը, ինչի վրա ուշադրություն դարձնել և արդյոք կարելի է պարապել, օրինակ ձեր մոտ, իր բացերը լրացնելու համար:

Տենց հարց Արմենը չէր սպասում... հարցը բավական տհաճ էր:

– Աա... Դուք փաստորեն Անու.... Աննայի մայրն եք,— Արմենի մոտ միանգամից միստիկան փոխարինվեց անհարմար-

րության ու փոշմանության զգացումների տհաճ խառնուրդով:

– Այո, Անուլիկի մաման եմ ու ձեր համարը գտա ամբիոնի միջոցով: Ի դեպ պարոն Բարլեզիզյանը իմ լավ ընկերն ա:– Կնոջ խոսակցությունը տանում էր դեպի այն թեման, որից Արմենը հույս ուներ հանգստանալ շաբաթ-կիրակի:

Մատուցողը բերեց խաչապուրին և այդ պահին զանգեց Արմենի հեռախոսը: Մովսեսն էր:

– Յա, ապեր,– թեքվեց տիկնոջ կողմը,– կներեք մի վայրկյան,– ու նորից Մովսեսին,– հանդիպման եմ, արագ խոսա:

Մովսեսն ուզում էր հանդիպել, զրուցել, կիսվել առավոտյան դարդոտ նորություններով և ուղղակի լանջ անել:

– Լսի... կարաս մի կես ժամից գաս Միմինո, հանդիպումից հետո միանգամից միասին այգում մի տեղ կնստենք,– Արմենը չէր կարծում, որ իմերեթական խաչապուրին և զրույցը կտևի կես ժամից ավել:

Այդպես էլ պայմանավորվեցին:

– Յա, կներեք: Յնմ, ինչ համով հոտ ա ...– Արմենը լիաթոք կծեց ռուսական «ագրեսիայի» տակ գտնվող երկրի խոհարարական գանձը:

– Այո, ստեղ լավ եմ սարքում: Մենակ չեմ հասկանում ինչու եմ ամեն տարի անունը փոխում ռեստորանի: Ինչևէ:– Կինը նույնպես կծեց խաչապուրին և անմիջական մթնոլորտի ձևավորումից հետո շարունակեց խոսել «գործից»:

– Գիտեք,– ծամելով պատասխանում էր Արմենը,– ես էլ բավական վատ զգացի երկրորդ լիկվիդի պահով... բայց իրոք,– Արմենը փորձեց գտնել «շատ բութ» ֆռազի մեղմ տեսակը՝ ծնողական սիրտը չկոտրելու նպատակով,– պարապելու շատ տեղ կա... Անուլիկի մոտ:

– Ես գիտեմ, ինքս ահավոր ջղայնացած եմ իրա վրա ու եկող տարվանից անպայման հետևելու եմ, որ նորմալ սովորի... Հիմա պարզապես ուզում եմ վստահ լինել, որ համալսարանից դուրս մնալու վտանգ չի սպառնում իրեն... ու եթե կա ճանապարհ,– բազմիմաստ տոնով ու ավելի ցածր ձայնով խոսեց տիկինը,– հարթելու այն խոչընդոտը, որ խանգարում ա լիկվիդը հեշտ դնել, ես կուզենայի այդ ճանապարհի... գինն իմանալ:

Արմենը մի պահ զժվեց, հետո իրեն հավաքեց ձեռքերի մեջ ու կուլ տվեց խաչապուրու վերջին կտորը: Արմենը երբեք կաշառքային իրավիճակում չէր հայտնվել: Բոյուսովը այն եզակի համալսարաններից էր, որտեղ դասախոսները (բացի մի քանի տեսական առարկաների տիաճ բացառությունների) իրոք զերծ էին կաշառակերությունից: Արմենը ուներ շատ լավ անուն, լավ դիրք ու հեռանկարներ համալսարանում ու կոռուպցիայի հոտ ունեցող այս խոսակցության շրջադարձը իր մոտ մեծ զզվանք առաջացրեց:

– Գիտեք, ինձ թվում ա մենք պետք ա անենք հետևյալը՝ Աննան պարապում ա, ամսի 7-ին գալիս ա լիկվիդի ու հանձնում ա այն միակ հնարավոր և ընդունված անխոչընդոտ ճանապարհով՝ մինիմալ բավարարող գիտելիքների առկայությամբ:

– Դուք ինձ ... այդքան ճիշտ չհասկացաք,– կինը որոշեց գնա *վաբանկ*,– Արմեն, ես այս քաղաքում վերջին մարդը չեմ և կարող եմ լինել լավ ընկեր կամ... քո դեպքում հուսով եմ միայն լավ ընկեր: Կարծում եմ միակ ճիշտ ճանապարհը կլինի, եթե դու հիմա վերցնես այ սա,– նա սլացիկ շարժումով դեպի Արմենը մղեց ցմփոր ծրար,– ու կնոջդ՝ եթե չեմ շփոթվում Ինգայի հետ մի երկու շաբաթով գնաք Իտալիա հանգստանալու:

Ամերիկացին այս դեպքում կգարմանար դեպքերի նման հետաքրքիր շրջադարձից ու կասեր՝ *wow*: Բայց Արմենը ամերիկացի չէր: Նա լուռ հետ մղեց ծրարը ու մի քանի սցենար մտքում մտածելուց հետո որոշեց իրագործել ամենալակոնիկը:

– Այս խոսակցությունը ավարտված է,– նա սեղանին անփույթ շարժումով դրեց 5 հազարանոց՝ իներեթականի համար, որի հաշիվը ակնհայտորեն պատրաստվում էր փակել տիկինը և վեր կացավ սեղանից:

Կինը չկորցրեց սառնասրտությունը: Մի պահ բռնեց Արմենի ձեռքը և նայեց իր աչքերի մեջ սառեցնող հայացքով.

– Արմեն, սխալ ես գործում, հուսով եմ ինձ հետ կզանգես շաբաթվա ընթացքում և նորից կհանդիպենք:

Արմենը չպատասխանեց և այդ պահին ներս մտավ Մովսեսը, որը չհամբերեց ռեստորանի դուրսը սպասել: Արմենը ձեռքի շարժումով հասկացրեց Մոսոյին, որ արդեն դուրս ա գալի և Մովսեսը հետ շրջվեց: Սակայն վերջին պահին որոշեց նայել Արմենի սեղանին նստած կնոջը և նրանց հայացքները պահի տակ հանդիպեցին: Մովսեսը բերանը զարմանքից կիսաբացեց: Չետո մի քիչ ուրախ փայլեր խառնվեցին զարմանքին ու նա զարմացած դիմեց կնոջը.

– Թամարա Գեորգիևնա?

**Buy the the book to see what happens next!**